



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2009թ.

N 11-Ն

ք.Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՋԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության ծրագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը յուրաքանչյուր տնտեսական տարին ավարտվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱՊԵՏ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա.

razmavaran cagir.1

*Ծրագիր*  
*ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*  
*ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ*  
**ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	5	
<b>I. Գյուղատնտեսության ներկա վիճակի համառոտ բնութագիրը .....</b>	<b>5</b>	
1. Դրական տեղաշարժերը .....	5	
2. Չարգացման խոչընդոտները և հիմնախնդիրները .....	6	
<b>II. Գյուղատնտեսության զարգացման տեսլականը .....</b>	<b>10</b>	
<b>III. Ռազմավարության նպատակը .....</b>	<b>11</b>	
<b>IV. Ռազմավարության հիմնական խնդիրները .....</b>	<b>11</b>	
<b>V. Ռազմավարության հիմնական ուղղությունները .....</b>	<b>12</b>	
1. Ագրարային բարեփոխումների խորացում, շուկայական ենթակառուցվածքների զարգացում և տնտեսվարման ձևերի կատարելագործում .....	12	
2. Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, պարենային անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում .....	13	
3. Տեղական արտադրության գյուղմթերքների որակի և մրցունակության բարձրացում և անհրաժեշտության ու հնարավորության դեպքում ներմուծվող պարենամթերքների՝ տեղական արտադրությամբ փոխարինում .....	14	
4. Սննդի անվտանգության համակարգի զարգացում .....	15	
5. Գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում <u>23</u>		
6. Հողաբարելավում և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության մեղմացում .....	19	
7. Օրգանական գյուղատնտեսության զարգացման համար նախապայմանների ստեղծում և իրավական հիմքերի ձևավորում .....	19	
8. Բուսաբուծության զարգացում .....	20	
<i>Ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի գենետիկական բազմազանության, ներառյալ՝ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովում .....</i>		20

9. Անասնաբուծության և անասնաբուծության զարգացում .....	34
<i>Անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխման աջակցություն, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնաբուծության կերի բազայի զարգացում, անասնաբուծական առևտրային կազմակերպությունների զարգացման աջակցություն, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության ապահովում.....</i>	
	<u>34</u>
10. Գյուղատնտեսական հումքի վերամշակում .....	40
<i>Ոլորտի զարգացում և վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխում: Առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և արտադրանքի մրցունակության բարձրացում: Մարքեթինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացում .....</i>	
	<u>40</u>
11. Գյուղատնտեսություն սպասարկող և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում .....	43
12. Ագրարային ոլորտի հարկային և վարկային համակարգի բարելավում .....	29
13. Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում .....	48
<i>14. Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում` գյուղատնտեսության համատարած հաշվառման ծրագրի, գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների իրավական կարգավիճակի և իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության մշակման միջոցառումների իրականացում .....</i>	
	30
VI. Գյուղատնտեսության պետական կարգավորման գործառույթները .....	30
VII. Ռազմավարության իրականացումից ակնկալվող արդյունքները .....	31
VIII. Աղյուսակներ.....	53

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ռազմավարության մեջ ներկայացված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Նոր արտադրահարաբերություններով պայմանավորված՝ տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղատնտեսական մթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը զգալիորեն սահմանափակել է գյուղատնտեսության ոլորտին պետական անմիջական միջամտությունը: Սակայն, ելնելով ագրարային ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության ապահովման առաջնահերթությունից, անցումային ժամանակահատվածում կարևորվում է գյուղատնտեսության պետական աջակցությունը, որը ուղղված կլինի ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ենթակառուցվածքների, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի ձևավորմանն ու զարգացմանը:

Ռազմավարությունը ներառում է ագրարային ոլորտում վարվող քաղաքականության հիմնական ուղղությունները և վերջիններիս իրականացումն ապահովող միջոցառումները: Փաստաթղթով սահմանվում են նաև գյուղատնտեսության նախընտրելի մասնագիտացումն ու ռացիոնալ տեղաբաշխումը, որոնք պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և տնտեսվարող սուբյեկտների համար կարող են հանդիսանալ առավել նպատակամետ գործունեության ուղենիշ:

Ռազմավարությունը պետք է նպաստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ագրարային բարեփոխումների խորացման քաղաքականության շարունակությանը և գյուղական աղքատության հաղթահարմանը:

Ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում գյուղական բնակչությունը կազմում է մոտ 49 տոկոս: Ծրագրով նախատեսվում է առաջիկա տարիներին բնակչության այդ հատվածի աշխատունակ մասին հիմնականում ապահովել աշխատանքով՝ ներգրավելով նրանց գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտներում:

## I. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 1. ԴՐԱԿԱՆ ՏԵՂԱՇՆՈՒԹԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ագրոպարենային համակարգը 2000-2007 թվականներին ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի մոտ 54.7, այդ թվում՝ գյուղատնտեսությունը՝ 45.2 տոկոսը: 1995 թվականից սկսած, ելնելով Արցախի տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունից, ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականությունը: Դրա արդյունքում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 18375 գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսական սպասարկման, գյուղմթերքների իրացման և վերամշակման մասնավոր ընկերություններ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ որպես կազմակերպական և արտադրական միավորներ հանդես են գալիս գյուղացիական տնտեսությունները, որոնք տնօրինում են վարելահողերի 24.4, բազմամյա տնկարկների՝ 38.0, խոտհարքերի՝ 3.3 տոկոսը:

Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշիռ մասը (ավելի քան 99 տոկոսը), արտադրվում է մասնավոր հատվածի կողմից:

Նոր արտադրահարաբերությունների պայմաններում, երբ հիմնովին փոխվել է հողօգտագործման համակարգը և մշակովի հողատարածքները մասնատվել են հողակտորների, առանձնակի կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը և տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը ինքնաբերաբար հանգեցնում են մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացման և տնտեսվարող սուբյեկտների թվի կրճատման՝ ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման, զբաղվածների թվի նվազեցման: Չնայած Արցախի գյուղատնտեսության մեջ այս օրինաչափությունները դեռևս ընդգծված չեն, այդուհանդերձ փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսվարմանը պետք է նպաստեն ճյուղի սպասարկող

ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումը: Դա, կոպերացիայի զարգացման հետ մեկտեղ, փոքր հողակտորներով պայմանավորված դժվարությունների հաղթահարման ամենարդյունավետ ուղին է: Այդ նպատակի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն իրականացնում է ոռոգման համակարգերի զարգացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարի, գյուղական ենթակառուցվածքների զարգացման, հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացման և կարևոր այլ ծրագրեր:

Նշվածի արդյունքում որոշակի դրական տեղաշարժ է արձանագրվել հացահատիկի և բանջարեղենի արտադրության, ինչպես նաև խաղողագործության բնագավառում: Գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների, ինչպես նաև փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջև աստիճանաբար նկատվում են պայմանագրային հարաբերությունների ձևավորման միտումներ, որոնք հուսալի նախապայմաններ են ստեղծում գյուղմթերքների արտադրության և արտադրողների եկամտի ավելացման համար: Վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում նկատելի է խաղողի հումքի ավելացում՝ ի հաշիվ այգետնկումների և մշակության ագրոտեխնիկայի բարելավման:

Իրականացված ագրարային բարեփոխումների առաջին տարիներին զգալիորեն կրճատվեցին անասնապահության ճյուղի արտադրության ծավալները: Բուսաբուծության համեմատությամբ՝ այս ճյուղում արտադրական ներուժի վերականգնումն ավելի ծախսատար և երկարաժամկետ գործընթաց է: Սակայն մսի, ձվի, կաթի և բրդի մեծ պահանջարկը, վարկավորման հնարավորությունների ընդլայնումը, պետության օժանդակությամբ հակահամաձարակային միջոցառումների իրականացումը և անասնաբուժական ծառայության բարելավումը նպաստել են անասնապահության ճյուղի որոշակի կայունացմանը:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման ուղղությամբ, հետպատերազմյան տարիներին զգալիորեն նվազել են արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը և արտադրության ծավալները: Սակայն, լրացուցիչ ներդրումների և արտադրանքի մրցակցության բարձրացման շնորհիվ, որոշակիորեն բարելավվել է այս համակարգի վիճակը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 2007 թվականին սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 19.3 տոկոս, իսկ ընդհանուր մշակող արդյունաբերության մեջ՝ 55.3 տոկոս:


Գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը նպաստել է գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմացմանը և տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը: Այս առումով առաջընթացն ավելի ակնառու կլիներ, եթե գյուղատնտեսության վարկավորման և ռիսկերի ապահովագրման հիմնախնդիրները ստանային իրենց ամբողջական լուծումը: Թեև առևտրային բանկերի և պետության կողմից իրականացվող վարկային քաղաքականության շնորհիվ տարեցտարի ավելանում են գյուղատնտեսությանը հատկացվող վարկային միջոցները, սակայն այն բավարարում է պահանջարկի 5-10 տոկոսը միայն:

Որպես ձեռքբերում կարելի է նշել նաև տնտեսվարող սուբյեկտների գործելաձևի և մտածողության փոփոխությունը, որի դեպքում գյուղմթերքներ արտադրողն այլևս իր արտադրական խնդիրների լուծումն ամբողջովին չի կապում հովանավորչության հետ և ագրարային ոլորտի ամենատարբեր գործառույթներ ունեցող սուբյեկտների հետ հանդես է գալիս որպես հավասար գործընկեր:

## **2. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**


Ձեռքբերումներն ու դրական տեղաշարժերն ավելի շոշափելի կարող էին լինել, եթե Արցախի գյուղատնտեսությունը անցումային փուլ ապրող երկրների տնտեսությանը յուրահատուկ դժվարությունների հետ միասին չժառանգեր արցախյան հակամարտության և Արցախի ու Հայաստանի շրջափակման դժվարությունները: Դա օբյեկտիվորեն հանգեցրեց երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, և մեծապես տուժեց նաև ագրոպարենային համակարգը, ինչի հետևանքով, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, ագրարային ոլորտի բարեփոխումներից ու սեփականաշնորհումից չստացվեցին ակնկալվող արդյունքները: Մասնավորապես, հողի սեփականաշնորհմանը անմիջապես չհաջորդեց գյուղատնտեսության սպասարկման և ագրովերամշակման համակարգի մասնավորեցումը, տնտեսվարման նոր պայմաններին համապատասխան արտադրական և շուկայական ենթակառուցվածքների ձևավորումը: Բնակչության գնողունակության ցածր մակարդակը, նախկին առևտրատնտեսական կապերի խզումը և արտաքին հաղորդակցության ուղիների շրջափակումը հանգեցրին գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի և վերարտադրողական կարողությունների նվազման, ինչպես նաև արտադրության էքստենսիվ զարգացման, լուրջ դժվարություններ ստեղծվեցին գյուղատնտեսական և նրա հումքի վերամշակումից ստացված արտադրանքի իրացման, ինչպես նաև նյութատեխնիկական մատակարարումների ու սպասարկումների բնագավառում:

Գյուղատնտեսության բնագավառում արտադրության արդյունավետ կազմակերպմանը դեռևս լուրջ խոչընդոտ են նաև գյուղացիական տնտեսությունների համեմատաբար փոքր չափերը և այս ոլորտում տնտեսվարման տարբեր ձևերի ներդրման դանդաղ տեմպերը: Ներկայումս միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.67 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.57 հա վարելահող, ինչը չի կարող արդյունավետ տնտեսավարման և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման համար պատշաճ հնարավորություն ստեղծել: Միևնույն ժամանակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, վարելահողերի շուրջ 42.7 տոկոսը նպատակային նշանակությամբ չի օգտագործվում: 2007 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 1995 թվականի նկատմամբ ավելացել են շուրջ 2.0 անգամ, իսկ բազմամյա տնկարկների տարածքները նվազել են 10.5 տոկոսով (գծապատկերներ 1 և 2):




**Գծապատկեր 1. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները**





**Գծապատկեր 2. Բազմաձև տնկարկների տարածքները**

Գյուղատնտեսության ինտենսիվացման դեռևս ցածր մակարդակի, սերմնաբուծության համակարգի անկատարության, պարարտանյութերի և թունաքիմիկատների անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրոտեխնիկական կանոնների խախտման պատճառով դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Հիմնականում ցանքատարածությունների ավելացման հաշվին մեծացել է հացահատիկի և բանջարեղենի համախառն բերքը: Ինտենսիվացման առումով որոշակի դրական տեղաշարժեր կան խաղողագործության բնագավառում (գծապատկեր 3):




**Գծապատկեր 3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
բուսաբուծական հիմնական մթերքների համախառն բերքը  
1995-2007 թվականներին**

Խաղողագործության ճյուղի զարգացմանը դեռևս խոչընդոտում են խաղողի ներկայիս սորտային կազմի անհամապատասխանությունը վերամշակող արդյունաբերության պահանջներին, մշակության ագրոտեխնիկական պահանջների ոչ լիարժեք պահպանումը: Գրեթե 20 անգամ կրճատվել է հանքային, ամբողջությամբ օրգանական պարարտանյութերի և շուրջ 10 անգամ բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումը:

Գյուղատնտեսության տեխնիկական ապահովման բնագավառում ևս լուրջ խնդիրներ կան: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների շուրջ 97 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր են սարքինության մակարդակը և արտադրողականությունը, ինչից ելնելով էլ՝ բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները:


Չնայած որ պետության օժանդակությամբ ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ զգալի աշխատանքներ են իրականացվել, այնուամենայնիվ, այս բնագավառում դեռևս բազում հիմնախնդիրներ կան. հանրապետության 118.3 հազ. հա վարելահողերից փաստացի ոռոգվում է միայն 2 հազ. հա:

Նոր արտադրահարաբերություններին անցնելու ժամանակահատվածում լրջորեն տուժեց նաև անասնապահությունը: Բնակչության գնողունակության զգալիորեն նվազումից բացի, սեփական կերարտադրության կրճատման և ներկրվող կերերի ծավալների կտրուկ սահմանափակման հետևանքով կրճատվեցին անասնազխաքանակը և անասնապահական մթերքների արտադրության ծավալները (զծապատկերներ 4 և 5): 1990 թվականի համեմատությամբ՝ ավելի քան 641 անգամ կրճատվել է կերային մշակաբույսերի տարածությունը, անբավարար են օգտագործվում բնական կերահանդակները: Գյուղամերձ արոտավայրերի զերբեռնվածությունը և հեռագնա արոտների սահմանափակ օգտագործումը ցայտուն է դարձել: Վերջիններս հանգեցնում են լուրջ տնտեսական կորուստների և արոտավայրերի դեգրադացման:



**Գծապատկեր 4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնազխաքանակը 1995-2007 թվականներին**

Անասնապահական որոշ մթերքների՝ կաթի, մսի և ձվի ավելացման հետ մեկտեղ, դեռևս խնդիրներ կան տոհմային գործի կազմակերպման, անասնաբուժական համակարգի ամրապնդման և ոլորտի պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Խնդիրներ կան սննդամթերքի անվտանգության և ստանդարտացման բնագավառներում:



**Գծապատկեր 5. Անասնապահական մթերքների արտադրությունը**

Նշված հիմնախնդիրներին ավելանում են նաև գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման դժվարությունները, որոնք մի կողմից պայմանավորված են տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, մյուս կողմից գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ և արտահանման դժվարություններով:

Գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացումը, առևտրային հաշվեկշիռի և կառուցվածքի բարելավումը նույնպես դիտվում են որպես ռազմավարական կարևորություն ներկայացնող հիմնախնդիրներ:

Դեռևս լիարժեք կերպով չեն գործում գյուղատնտեսության արտադրական և սպասարկման ենթակառուցվածքները, գիտական նվաճումները, նոր տեխնոլոգիաներն արտադրության մեջ չափազանց դանդաղ են ներդրվում:

Գյուղատնտեսությունում տնտեսվարողների վարկավորման պահանջը դեռևս չի բավարարվում, յուրաքանչյուր տարի գյուղացիները շրջանառու միջոցների խիստ կարիք են զգում, իսկ գործող բանկային համակարգի կողմից վարկավորման պայմանները՝ գրավի առարկայի շրջանակները, վարկավորման ժամկետը և տոկոսադրույքը դժվարամատչելի են, հաճախ նաև՝ անընդունելի գյուղացիական տնտեսությունների գերակշռող մասի համար:

Գյուղատնտեսության բնագավառում բացակայում է բնական աղետների հետևանքով կորուստների ապահովագրումը, և դեռևս նկատելի չեն շոշափելի տեղաշարժերը բնական աղետների կանխարգելման կառույցների կազմավորման ուղղությամբ: Այս ամենը նույնպես, իրենց հերթին բացասաբար են ազդում գյուղատնտեսության արդյունավետության և ճյուղային կառուցվածքի վրա:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը» փաստաթղթում հիմք ընդունելով ագրարային բարեփոխումների՝ անցած ժամանակահատվածում գրանցված ձեռքբերումները, ինչպես նաև տեղ գտած սխալներն ու բացթողումները, իրատեսորեն գնահատելով գյուղատնտեսության հիմնախնդիրները, սահմանվում են 2008-2015 թվականներին ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները:

Ազատական տնտեսության պայմաններում պետական միջամտության սահմանափակման գաղափարը ընդունելով՝ միաժամանակ հստակեցվում են անցումային փուլում պետության կողմից իրականացվող գործառնությունները:

## II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Սույն ռազմավարությունում ներկայացվում են մինչև 2015 թվականը ընկած ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Տնտեսության շուկայական կողմնորոշման աստիճանական և հետևողական խորացման ու ագրարային հատվածին բնորոշ առանձնահատկություններով պայմանավորված պետական աջակցության քաղաքականության արդյունքում ռազմավարության իրականացման վերջնահատվածում գյուղատնտեսության ոլորտի զարգացման տեսլականը հետևյալն է.

1) ընտանեկան ֆերմերային տնտեսությունների և գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների հիմքի վրա շուկայական կողմնորոշում և մրցունակ, տնտեսության մյուս հատվածների հետ հորիզոնական կապերի մեջ գտնվող՝ կոոպերացված արտադրություն.

2) հանրապետության պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքների արտաքին առևտրի հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրումով՝ բնակչությանը պարենով կայուն ապահովում և ագրովերամշակող հատվածի գյուղատնտեսական հումքի պահանջարկի բավարարում.

3) աշխատանքի արտադրողականության աճի շնորհիվ գյուղատնտեսության բնագավառում կապահովվի համախառն արտադրանքի ավելացումը, կկրճատվի գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը, գյուղական բնակավայրերում կապահովվի զգալի զբաղվածություն՝ գյուղատնտեսության սպասարկման և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում.

4) արտադրված գյուղատնտեսական հումքի զգալի մասը կվերամշակվի ինչպես մեծ հզորության վերամշակող ձեռնարկությունների, այնպես էլ գյուղական համայնքներում ձևավորված և գործունեություն ծավալող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջոցով.

5) բուսաբուծության և անասնապահության ներձյուղային կառուցվածքներում կարձանագրվեն դրական տեղաշարժեր, կավելանան բարձր ավելացված արժեք ապահովող գյուղատնտեսական մթերքների արտադրության բազան և արտադրության ծավալները.

6) նշանակալիորեն կբարելավվի գյուղատնտեսության ներուժի, հատկապես՝ հողային ռեսուրսների օգտագործման վիճակը.

7) նկատելիորեն կբարձրանա հանրապետության բնակչության պարենային անվտանգության մակարդակը, զգալիորեն կբարձրանա կարևորագույն պարենամթերքների տեղական արտադրության հաշվին ապահովվածությունը, կնվազի գյուղական բնակչության աղքատությունը:

### III. ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ագրարային ոլորտի զարգացման ռազմավարության հիմնական նպատակն է նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը՝ գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով:

Հիմնական նպատակից բխող ենթանպատակներն են.

1) Գյուղմթերքների արտադրության ծավալների ավելացում և արտադրության եկամտաբերության բարձրացում:

2) Գյուղատնտեսության ոլորտում առկա արտադրական ներուժի՝ հողային, ջրային, աշխատանքային, գիտատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործում:

3) Սննդամթերքի անվտանգության հիմնախնդիրների լուծում:

4) Գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացում և արտահոս-քի կանխում, գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության ընդլայնում:

5) Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավում, բարձր ավելացված արժեք ապահովող արտադրանքների արտադրության տեսակարար կշռի մեծացում:

6) Շրջակա միջավայրի վրա գյուղատնտեսության բացասական ազդեցության նվազեցում:

7) Գյուղատնտեսության հարկային և վարկային համակարգի բարելավում:

8) Գյուղատնտեսության բնագավառում գյուղատնտեսության՝ Հայաստանի Հանրապետության հետ ինտեգրացիոն գործընթացների զարգացում:

### IV. ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության հիմնական խնդիրներն են՝

1) ագրարային բարեփոխումների խորացումը, շուկայական ենթակառուց-վածքների զարգացումը և տնտեսվարման ձևերի կատարելագործումը,

2) պարենային ապահովության մակարդակի բարձրացումը, սննդի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում,

- 3) տեղական արտադրության գյուղմթերքների մրցունակության բարձրացում և, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենա-մթերքների՝ տեղական արտադրությամբ փոխարինում,
- 4) սննդի անվտանգության համակարգի զարգացում,
- 5) գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում,
- 6) հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացում,
- 7) օրգանական գյուղատնտեսության զարգացման համար նախապայման-ների ստեղծում և իրավական հիմքերի ձևավորում,

8) բուսաբուծության զարգացում.  
 ա. ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում,  
 բ. սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում,  
 գ. բույսերի պաշտպանության և կարանտինային միջոցառումների իրա-կանացում,  
 դ. մշակաբույսերի գենետիկական բազմազանության, ներառյալ՝ մշակա-բույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովումը:

9) Անասնաբուծության և անասնաբուծության զարգացում.  
 ա. աջակցություն անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխմանը,  
 բ. տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում,  
 գ. անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում,  
 դ. անասնաբուծության կերի բազայի զարգացում,  
 ե. անասնաբուծական առևտրային կազմակերպությունների զարգացմանն աջակցություն,  
 զ. անասնաբուծական համակարգի բարելավում և իրականացվող անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում,  
 է. անասնաբուծության կերի համակարգված բազայի ստեղծում և զարգացում,  
 ը. գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանու-թյան պահպանման ապահովում:

10) Գյուղատնտեսական հումքի վերամշակում.  
 ա. ոլորտի զարգացում և վերամշակող կազմակերպությունների արդյունա-վետ տեղաբաշխում,  
 բ. առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և մրցունակ արտադրանքի թողարկում,  
 գ. մարքեթինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանա-զրրային հարաբերությունների զարգացման խթանում:

11) Գյուղատնտեսության սպասարկող և սոցիալական ենթակառուցվածք-ների զարգացում,  
 12) Ագրարային ոլորտի հարկային և վարկային համակարգի բարելավում.

ա. հարկային արտոնության համակարգից սուբսիդավորման համակարգի անցման մեխանիզմների մշակում և կիրառում,  
 բ. գյուղատնտեսության վարկավորման մեխանիզմների կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում,  
 գ. լիզինգի կիրառում:

13) Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի ստեղծում,  
 14) Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում, գյուղա-տնտեսությամբ զբաղվող սուբյեկտների իրավական կարգավիճակի և իրավահարաբերությունների կարգավորման օրենսդրության մշակման միջոցառումների իրականացում:

**V. ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 1. **ԱԳՐԱՐԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՐՄԱՆ ԶԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**  
 Վերոհիշյալ խնդիրները կլուծվեն հետևյալ ուղղություններով.  
 Ագրարային բարեփոխումների հետևողական իրականացումն ու դրանց խորացումը նախատեսում և ենթադրում են հետևյալ ուղղություններով հողային հարաբերությունների հետագա կատարելագործում.  
 1) գյուղատնտեսական հողատեսքերի, հատկապես վարելահողերի, լիարժեք օգտագործման ապահովում:  
 2) արոտավայրերի երկարաժամկետ վարձակալության խրախուսում: Պետության աջակցությամբ արոտների բարելավման ու ջրարբիացման աշխատանքների իրականացում:

3) հողային օրենսդրությամբ սահմանված պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարման վերաբերյալ հրապարակայնության ապահովում և հողի շուկայի ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման աջակցություն:

4) որոշ համայնքներում հողերի միավորման փորձնական ծրագրերի իրականացում: Վերջիններիս արդյունքից ելնելով՝ հողերի միավորման գործուն մեխանիզմների մշակում և համապատասխան ծրագրերի իրականացում:

5) հողի շուկայի ձևավորման և ակտիվացման նպատակով գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանում. մասնավորապես՝ պետության աջակցությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման» հայեցակարգի մշակում և իրականացում:

6) իրավասու պետական կառավարման մարմինների միջոցով հողերի մոնիթորինգի, գյուղատնտեսական հողատեսքերի բազմաբնույթ կադաստրի վարման, հողերի էկոլոգիական վիճակի բարելավման ծրագրերի իրականացում:

7) գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններին արտադրության արդյունավետ կազմակերպման ուղղությամբ հիմնավորված խորհրդատվության ապահովում:

8) բնագավառի արտադրական ներուժի գնահատման և պետական նպատակային ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է գյուղատնտեսության համատարած հաշվառման իրավական հիմքերի ստեղծում և համապատասխան ծրագրերի իրականացում, հողերի գնահատման խմբերի և կադաստրային արժեքի ճշգրտում:

9) տեղական արտադրողների շահերի և ներքին շուկայի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրագործում՝ տարիֆային կարգավորման, սեզոնային քվոտավորման, ներդրումային միջավայրի բարելավման և տնտեսական այլ լծակների օգտագործման միջոցով:

**Գյուղատնտեսության բնագավառում շուկայական ենթակառուցվածքների զարգացումը նպատակաուղղվելու է գյուղատնտեսական մթերքների իրացման, ոլորտի ֆինանսավորման և վարկավորման համակարգերի կատարելագործմանը, ապահովագրական մեխանիզմների ներդրման նախաայնմանների ստեղծմանը:**

Թվարկված խնդիրների լուծման համար նախատեսվում է՝

1) գյուղատնտեսական մթերքների արտադրությունից մինչև սպառումը ապրանքային շարժին նպաստող կառույցների, մասնավորապես՝ գյուղատնտեսական մթերքների իրացման, պահպանման, վերամշակման ենթակառուցվածքների զարգացման և մեծածախ շուկայի համակարգի ստեղծմանը նպաստում,

2) մսամթերքների իրացման նպաստման և սննդի անվտանգության պահանջների ապահովման նպատակով փոքր սպանդանոցների ծրագրի իրականացում, կաթի սպառողական կոոպերատիվների ստեղծում, դրանց թվաքանակի ավելացում և գործունեության խթանում,

3) գյուղատնտեսական վարկավորման նպաստավոր պայմանների ստեղծում,

4) գյուղատնտեսությունում վարկավորման կատարելագործում և ծավալների ավելացում՝ (նախատեսելով մինչև 2015 թվականը ավելացնել գյուղատնտեսության վարկավորման ծավալները ավելի քան 10 անգամ),

5) ապահովագրական համակարգի ներդրման ճանապարհով՝ «Գյուղատնտեսական ռիսկերի կառավարում» փորձնական ծրագրի իրականացում: Այն համայնքներում, որտեղ ստեղծված են գյուղատնտեսական կոոպերատիվներ, իրականացնել կոոպերատիվների անդամների փոխադարձ ապահովագրություն, որից հետո փորձարկում անցած մեխանիզմները ներդնել նաև մյուս գյուղական համայնքներում:

6) մասնավոր ապահովագրական ընկերություններին գյուղատնտեսության ոլորտ ներգրավմանն աջակցություն:

**Գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացման համար նախատեսվում է՝**

1) գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, կոոպերատիվների, միավորումների և գյուղատնտեսական այլ իրավա-կազմակերպական ձևերի կարգավիճակի օրենսդրական հստակեցում,

2) գյուղատնտեսական կոոպերացիայի առանձին ձևերի կանոնակարգում,

3) կոոպերատիվների և միավորումների ձևավորման մարքեթինգային, վարկային, լիզինգային ու խորհրդատվական աջակցություն,

4) «Գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերի ընդունում:

## **2.ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՉՐԱՑՈՒՄ,**

**ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՔԱՎՈՒԹՅԱՆ  
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՊԿՂՈՎՈՒՄ**

Պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման և պարենային անվտանգության ապահովման հետ կապված խնդիրների լուծման համար նախատեսվում է՝

1) պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման քաղաքականության մշակում և իրականացում,

2) բնակչության կենսամակարդակի բարձրացում. 1 շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի, նվազագույն և միջին ամսական աշխատավարձի, կենսաթոշակի և նպաստի զգալի ավելացում,

3) բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով՝ ծրագրով նախատեսվում է մինչև 2015 թվականը գյուղատնտեսության ավելացված արժեքի որոշակի ավելացում և գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության ներկայիս ցուցանիշի՝ 10 տոկոսով ավելացում,

4) խաղողագործության, գինեգործության ճյուղի առանձնահատկությունները պահանջում են բնագավառի տնտեսական հարաբերությունների հստակեցում և ճյուղի հետագա զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում: Դրա համար անհրաժեշտ է բնագավառը կարգավորող իրավաօրենսդրական հիմքերի ձևավորում, մասնավորապես՝ «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի մշակում, որը կկարգավորի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գինեգործության նպատակով խաղողի մշակության, իրացման և խաղողի հումքով ոգելից խմիչքների արտադրության, վերամշակման, մակնշման և շուկայահանման ընթացքում ծագող հարաբերությունները: Ճյուղի զարգացմանը կնպաստի նաև շուկայահանման բնագավառում ուսումնասիրությունների անցկացումը և արդյունքների օգտագործումը,

5) պարենամթերքի ֆիզիկական մատչելիությանը հասնելու համար նպատակահարմար է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արտադրությունում նոր տեխնոլոգիաների ու արտադրատեսակների ներդրմանը նպաստող ծրագրերի իրագործումը, այդ նպատակի համար մատչելի պայմաններով նպատակային և արտոնյալ վարկերի տրամադրումը և այլ քայլեր:

**Հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման ռազմավարական ուղղություններն են՝**

1) կենսապես կարևորագույն պարենամթերքների, մասնավորապես՝ հացամթերքի, մսի, կաթի և բուսական յուղի տեղական արտադրության խթանում և սահմանված կարգով չնվազեցվող պաշարների ստեղծում,

2) անասնապահական մթերքների ծավալների ավելացման նպատակով կերային բազայի հնարավորությունների ընդլայնում, մասնավորապես՝ առավել արդյունավետ կերային մշակաբույսերի (եգիպտացորեն, կերի ճակնդեղ, ոչ ավանդական համարվող մշակաբույսեր և այլն) մշակության նոր տեխնոլոգիաների ներդրման համար տեխնիկական աջակցության և խորհրդատվության ապահովում:

Պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները նպաստում են հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի բարձրացմանը:

**3. ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ  
ԵՎ ԱՆՀՐԱԺԵՏՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ՝  
ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄ ՓՈՒՆԱՐԻՆՈՒՄ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք առաջին անհրաժեշտության պարենամթերքների ինքնաբավության մակարդակը զգալիորեն ցածր է, այսպես՝ 2006 թվականի տվյալներով այն կազմել է. միսը՝ 28 տոկոս, կաթը՝ 63 տոկոս, ձու՝ 50 տոկոս: Վերջիններս վկայում են առաջին անհրաժեշտության պարենամթերքների ներմուծումը որոշակի հիմնավորված սահմաններում տեղական արտադրությամբ փոխարինելու կարևորության մասին: Դրան հնարավոր է հասնել տեղական արտադրության մթերքների որակի ու մրցունակության բարձրացման և արտադրության ծավալների ավելացման միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է՝

1) գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսության բնագավառում տնտեսվարողներին աջակցության ցուցաբերում՝ անասնապահության, բուսաբուծության, գյուղմթերքների վերամշակման բնագավառում առաջադիմական և արդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված խորհրդատվության, մատչելի պայմաններով արտոնյալ և նպատակային վարկերի ծավալների ընդլայնման և ներդրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով,

2) ագրարային ոլորտի տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի իրականացում՝ կարևորագույն համարվող բնագավառներում, մասնավորապես.

- ա. մշակաբույսերի նոր սորտերի մշակության արդյունավետ տեխնոլոգիաների ներդրում,
- բ. բարձր ավելացված արժեք ապահովող և շուկայական պահանջարկ ունեցող մշակաբույսերի ներդրում,
- գ. բարձր մթերատու գյուղատնտեսական կենդանիների ցեղերի ներմուծում և ընտրասերման ճանապարհով անասունների տեղական ցեղերի տոհմային հատկանիշների բարելավում,
- դ. անասունների պահվածքի, խնամքի և կերակրման արդյունավետ տեխնոլոգիաների ներդրում,
- ե. գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար նոր տեխնոլոգիաների ներդրում և եղածների կատարելագործում, մասնավորապես՝ կաթի վերամշակման և պահածոների արտադրության բնագավառում,
- 3) պետության ուշադրությունը կուղղվի տեղական արտադրության գյուղմթերքների մրցունակության բարձրացմանը և, անհրաժեշտության ու նպատակահարմարության պարագայում՝ ներմուծվող պարենամթերքները տեղական արտադրությամբ փոխարինմանը: Արտադրության պայմանների բարելավման հետ, դա նախատեսում է անցում բարձր ավելացված արժեքով արտադրության, հետքերքահավաքային, գյուղմթերքների վերամշակման տեխնոլոգիաների և շուկայական գործընթացի բարելավմանը:

#### **4. ՄՆՆՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը արտերկրից պարենամթերքի ներքին շուկա մուտք գործելու հնարավորության տեսանկյունից համարվում է ազատական շուկա ունեցող երկիր: Հանրապետություն ներմուծվող, թարմ և վերամշակված սնունդ արտադրող տնտեսվարող սուբյեկտների բազմազանությունը, դրանց կողմից տարբեր տեխնոլոգիաների կիրառումն ու սննդամթերքի անվտանգության վերահսկման ամբողջական համակարգի բացակայությունը լուրջ վտանգ են ստեղծում սպառողների առողջության համար:

Սննդի անվտանգության անհրաժեշտ ստանդարտների համապատասխանության պարագայում կբարձրանա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի մրցունակությունը, որի համար գյուղատնտեսական և ագրոպարենային հատվածը պետք է կարողանա նաև արդյունավետ կերպով արձագանքել տեղական սպառողների՝ սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջներին և մրցակցել ներկրվող ապրանքների, իսկ արտահանման դեպքում՝ արտասահմանյան ապրանքների որակական ստանդարտների հետ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից գյուղատնտեսական մթերքների արտահանման իրավիճակի բարելավման տարբերակներից մեկը առանձնահատուկ շուկաներ, ինչպիսիք են՝ հայկական սփյուռքի և օրգանական սննդամթերքի շուկաները ապրանքներ արտահանելն է: Միջազգային շուկա մուտք գործելու նախադեպ է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացումը, ինչպես նաև սննդամթերքի որակի բարելավումը:

Այս պարագայում անհրաժեշտ է ներկայացնել երաշխիքներ, որ սննդամթերքներն արտադրվել են այնպիսի վայրերում, որտեղ չկան որոշ տեսակի վնասատուներ և հիվանդություններ. գործում են սննդամթերքի արտադրության, փաթեթավորման և առաքման հիգիենայի տարրական կանոնները, կամ որ պեստիցիդների կամ անասնաբուժական դեղերի մնացորդները և շրջակա միջավայրի աղտոտիչները սննդամթերքում չեն գերազանցում իրենց թույլատրելի չափերը: Արտահանող երկիրը և արտադրական ամբողջ ճյուղը պետք է համապատասխանեն այս պահանջներին և, շատ դեպքերում, նաև ապացուցեն, որ համապատասխանությունն ապահովված է: Սննդամթերքի անվտանգության և բույսերի ու կենդանիների առողջության վերահսկման կարողությունը շատ կարևոր է ոչ միայն արտահանման համար սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու, այլ նաև ներկրվող և տեղական արտադրության գյուղատնտեսական և պարենային ապրանքների նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնելու համար: Ըստ միջազգային պրակտիկայի սննդամթերքի անվտանգության համար պատասխանատվությունը կրում է արտադրողը:

Գործածության համար պիտանի և անվտանգ սննդի արտադրությունը մի ամբողջ շղթա է, որն իր մեջ ներառում է արդյունավետ գործող կորպորատիվ պետական և գիտական համակարգերը:

Սննդի անվտանգության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- 1) «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում,
- 2) սննդամթերքի որակի և անվտանգության հսկողության գործընթացի կազմակերպման համար փորձաքննություն անցկացնող լաբորատորիաների ստեղծում և ուժեղացում՝ ապահովելով դրանց տեխնիկական հագեցվածությունը, համապատասխան կադրերի ուսուցումը և վերապատրաստումը,
- 3) տեղական արտադրության սննդամթերքի անվտանգության և կրիտիկական կետերի հսկման, ինչպես նաև որակի կառավարման համակարգերի ներդրմամբ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:



Սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացումը կնպաստի պարենամթերքի որակի բարելավմանը և արտահանման խթանմանը, որի արդյունքում կբարելավվի պարենամթերքի ապրանքաշրջանառության հաշվեկշիռը:

#### **5. ԳՈՏԻՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԱՑԻՈՆԱԿԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ**

Գյուղատնտեսության արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ հիմնավորված քաղաքականության կիրառումը և գյուղական աղքատության հաղթահարումը պահանջում են բազմակողմանիորեն հիմնավորված գոտիական մասնագիտացում և արտադրության արդյունավետ տեղաբաշխում: Ազատական տնտեսության պայմաններում այս գործընթացները կարգավորվում են շուկայական գործոններով, բայց նկատի ունենալով հիմնախնդիրների ռազմավարական նշանակությունը, անհրաժեշտ է, որ պետությունը տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում անուղղակիորեն նպաստի արտադրության մասնագիտացմանը և արդյունավետ տեղաբաշխմանը:

Նոր տնտեսահարաբերություններով պայմանավորված՝ ագրարային ոլորտի վերափոխումների ընթացքում, պայմանավորված տարբեր սոցիալ-տնտեսական գործոններով, նկատելի կերպով խթանվել է գյուղատնտեսական գոտիների մասնագիտացումը, ինչի հետևանքով ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը զգալիորեն նվազել է, կրճատվել են միավոր տարածությունից ստացվող համապատասխան արտադրանքը և աշխատանքի արտադրողականությունը:

Ստեղծված իրավիճակի կարգավորման նպատակով, հանրապետության բնատնտեսական ներուժի հնարավորությունների գնահատման հիման վրա, ռազմավարության փաստաթղթում ներկայացվում են հանրապետության շրջանների հեռանկարային նախընտրելի մասնագիտացման ուղղությունները: Վերջինս ուղենիշային է ինչպես ագրարային, այնպես էլ տարածքային զարգացման քաղաքականության համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առանձնացված գյուղատնտեսական գոտիները չեն համընկնում ըստ շրջանների բաժանմանը՝ կառավարելիության տեսանկյունից գոտիական մասնագիտացումը և արտադրության տեղաբաշխումը նպատակահարմար է ներկայացնել ենթաշրջանների կտրվածքով:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների գյուղատնտեսության  
նախընտրելի մասնագիտացումը և գլխավոր ճյուղերը (համախառն արտադրանքի  
կառուցվածքով)**

Շրջանները	Մինչև ագրարային բարեփոխումները	Ներկայիս վիճակը	Հեռանկարային մասնագիտացումը
1	2	3	4
Ասկերան	Մսակաթնային անասնապահություն, կաթի արտադրություն, հացահատիկային տնտեսություն, խաղողագործություն, բանջարաբուծություն, բրդի արտադրություն, կարտոֆիլաբուծություն, թռչնաբուծություն, պտղաբուծություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն, խաղողագործություն, բոստանային կուլտուրաների արտադրություն, մեղվաբուծություն, պտղաբուծություն, թթի արտադրություն, բրդի արտադրություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահության, խաղողագործություն, բանջարաբուծություն, կարտոֆիլաբուծություն, պտղաբուծություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն,
Մարտակերտ	Խաղողագործություն, կաթնային անասնապահություն, հացահատիկային տնտեսություն, բրդի արտադրություն, բանջարաբուծություն, կարտոֆիլաբուծություն, թռչնաբուծություն, պտղաբուծություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, խաղողագործություն, թռչնաբուծություն, բոստանային կուլտուրաների արտադրություն, մեղվաբուծություն, պտղաբուծություն, թթի արտադրություն, բրդի արտադրություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, խաղողագործություն, բանջարաբուծություն կարտոֆիլաբուծություն, պտղաբուծություն, ձկնաբուծություն
Մարտունի	Խաղողագործություն, հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, բրդի արտադրություն, բանջարաբուծություն, պտղաբուծություն թռչնաբուծություն, կարտոֆիլաբուծություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, խաղողագործություն, բոստանային կուլտուրաներ, թռչնաբուծություն, պտղաբուծություն, մեղվաբուծություն, թթի արտադրություն, բրդի արտադրություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, խաղողագործություն, պտղաբուծություն, թռչնաբուծություն, թթի արտադրություն, մեղվաբուծություն,

1	2	3	4
Հաղորթ	Խաղողագործություն, կաթնամսային անասնապահություն, հացահատիկային տնտեսություն, բրդի արտադրություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն, կարտոֆիլաբուծություն, պտղաբուծություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն, խաղողագործություն, բոստանային կուլտուրաների արտադրություն, պտղաբուծություն, մեղվաբուծություն, թթի արտադրություն, բրդի արտադրություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, խաղողագործություն, պտղաբուծություն, թթի արտադրություն, մեղվաբուծություն,
Շուշի	Կաթնամսային անասնապահություն, մսի արտադրություն, հացահատիկային տնտեսություն, բրդի արտադրություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն, պտղաբուծություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն, բոստանային կուլտուրաների արտադրություն, մեղվաբուծություն, պտղաբուծություն, բրդի արտադրություն	մսակաթնային տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլաբուծություն, մեղվաբուծություն
Շահումյան		Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, բոստանային կուլտուրաներ, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, պտղաբուծություն, բրդի արտադրություն	Կաթնամսային տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլաբուծություն, պտղաբուծություն, մեղվաբուծություն
Քաշաթաղ		Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային անասնապահություն, կարտոֆիլաբուծություն, բանջարաբուծություն, թռչնաբուծություն, բոստանային կուլտուրաների արտադրություն, պտղաբուծություն, մեղվաբուծություն, բրդի արտադրություն	Հացահատիկային տնտեսություն, կաթնամսային տավարաբուծություն, ոչխարաբուծություն, բանջարաբուծություն, պտղաբուծություն, բոստանային կուլտուրաների արտադրություն, խաղողագործություն, մեղվաբուծություն

Գյուղատնտեսության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) ելակետ ունենալով բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը և գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը՝ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրավորումը,

2) գյուղատնտեսության սուբսիդավորման, արտոնյալ վարկավորման և այլ ծրագրերի իրականացման տարբերակված մոտեցումների կիրառում՝ ըստ տարածաշրջանային զարգացման գերակայությունների,

3) ելակետ ունենալով հեռավոր և սահմանամերձ տարածաշրջանների զարգացման առաջնայնությունը՝ նպատակային վարկավորման և մարքեթինգային աջակցության միջոցով փոքր և միջին ձեռնարկատիրության աշխարհագրության ընդլայնումը,

4) շուկայական ու արտադրական և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ճանապարհով ներդրումային պայմանների բարելավումը,

5) միջշրջանային տնտեսական ինտեգրացման խթանումը և զարգացումը:

Սահմանամերձ բնակավայրերի տնտեսական և սոցիալական զարգացման համալիր աջակցություն, ինչի նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) սակավաբնակ բնակավայրերի ամրապնդում,

2) սահմանային գոտու թույլ զարգացած տարածքներում քաղաքաշինական-տնտեսական առաջնահերթ զարգացման ռեժիմի սահմանում,

3) տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների կրկնորդված ցանցի, տեղական նշանակության ճանապարհների ցանցի ընդլայնում, հեռախոսակապի և հեռուստահաղորդումների սփռման որակի բարելավում և աշխարհագրության ընդլայնում,

4) գյուղատնտեսական գործունեություն ապահովող պետական աջակցությամբ ծրագրերի համար սահմանամերձ գոտում իրականացման առաջնահերթության ապահովում,

5) սահմանամերձ գոտու գյուղատնտեսության և գյուղի զարգացման համալիր ծրագրի և դրա իրականացման միջոցառումների մշակում:

## 6. ՀՈՂԱԲԱՐԵՆԱՎՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՈՒՄ

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման համար կարևորագույն նշանակություն ունի հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը, որոնց կարևոր բաղադրիչներից են ոռոգման համակարգերի և հողերի բարելավման միջոցառումները: Վերջիններիս կուղղվեն վարկային և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր:

Սույն ռազմավարության շրջանակներում ոռոգման համակարգերի զարգացման հիմնական ուղղություններն են.

1) ոռոգման համակարգի կառավարման կառուցվածքի կատարելագործում և տեխնիկական վիճակի բարելավում,

2) մեխանիկական ոռոգումն ինքնահոսի փոխարինման, ոռոգման ջրի տնօրինման, տրման և հաշվառման իրավական-կազմակերպական հստակ մեխանիզմների ստեղծում,

3) նպաստել ջրօգտագործողների ընկերությունների ստեղծմանը և հետագա զարգացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը,

4) աջակցություն ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնմանը,

5) «Ոռոգվող գյուղատնտեսություն» խորագիրը կրող ծրագրի իրականացում: 2009-2011 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին կապիտալ ներդրումներով 8365.0 մլն դրամ ուղղվելու է ոռոգման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը, որի արդյունքում նախատեսվում է առկա 2500 հա ոռոգվող հողատարածքները 2011 թվականին հասցնել 13820 հա: Ծրագրով նախատեսվում է հետագայում ոռոգվող հողատարածքները հասցնել 15000 հա,

6) պատվարների անվտանգության ծրագրի իրականացում,

7) մինչև 2015 թվականը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության երաշխավորությամբ կազմված ծրագրերով ինքնահոս համակարգերի կառուցում,

8) նոր ջրամբարների կառուցում և եղած ջրամբարների վերանորոգում,

9) գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերի ու ռեժիմների ճշտման ծրագրի իրականացում: Ծրագրի արդյունքում ավելի քան 30 տարվա վաղեմության ոռոգման նորմերի և ռեժիմների փոխարեն կառաջարկվեն նոր, ոռոգման ժամանակակից պայմաններին բավարարող նորմեր և ռեժիմներ,

10) ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրում, որը կնպաստի ջրի արդյունավետ օգտագործմանը:

## 7. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Միջազգային շուկայում, հատկապես՝ Եվրոմիության երկրներում տարեց-տարի աճում է պահանջարկը ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված օրգանական պարենամթերքի նկատմամբ:

Օրգանական գյուղատնտեսական արտադրությունը հիմնված է կայուն և հավասարակշռված ագրոէկոհամակարգերի ստեղծման, պահպանության, աղտոտող տեխնոլոգիաների օգտագործման բացառման, քիմիական նյութերի կիրառման խիստ սահմանափակման, բույսերի տեսակների, ինչպես նաև կենդանիների ցեղերի կենսաբազմազանության ավելացման և հողի բնական բերրիության բարձրացման, արդյունավետ ցանքաշրջանառության, օրգանական պարարտանյութերի կիրառման, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի կենսաբանական և ֆիզիկական և այլ մեթոդներով պայքարի կազմակերպման վրա:

Այս բնագավառում արգելվում է գենետիկական վերափոխված օրգանիզմների և դրանց ածանցյալների՝ իոնացնող ճառագայթման, ինչպես նաև ժամանակակից որևէ կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառումը:

Անասնաբուժական ծագման մթերքների և դրանց վերամշակումից ստացվող օրգանական սննդամթերքի արտադրության համար կարևոր նախադրյալ է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ալպիական և ենթալպյան գոտու արոտավայրերի առկայությունը:

Հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ է.

1) մշակել և գործողության մեջ դնել «Օրգանական գյուղատնտեսության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որը սահմանելու և կարգավորելու է օրգանական գյուղատնտեսության հիմնական սկզբունք-ները, այդ բնագավառում լիազոր մարմնի (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության) իրավասություն-ները, տեսչական գործունեության և համապատասխանության գնահատման կարգը, օրգանական արտադրության մակնշման և պիտակավորման մոտեցումները, տնտեսվարողների պարտականությունները, ինչպես նաև բնագավառի պետական աջակցության ուղղությունները,

2) «Օրգանական գյուղատնտեսության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես սահմանել՝

ա. տեսչական գործունեության և պետական վերահսկողության կարգը,

բ. օրգանական արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջները,

գ. ոչ օրգանական ծագման նյութերի ցանկը, որոնք կարող են օգտագործվել որպես բաղադրամասեր,

դ. բուսական և կենդանական ծագման գյուղատնտեսական հումքից վերամշակված սննդամթերքի փաթեթավորման կարգը,

ե. օրգանական արտադրանքի պահեստավորման, տարավորման, փոխադրման, մակնշման և պիտակավորման կարգը, ինչպես նաև օրգանական պարենամթերքի ապրանքային շարժին վերաբերող այլ գործառնություններին առնչվող իրավական ակտերի մշակումը,

3) մասնավոր հատվածում համապատասխանությունը հավաստող (գնահատող) մարմինների ձևավորմանն աջակցությունը: Այդ մարմինները պետք է ունենան վերահսկողության (տեսչական գործունեության) համապատասխան փորձ, ռեսուրսներ, որակավորված աշխատակազմ, աշխատանքները իրականացնեն թափանցիկ և համապատասխանության գնահատման գործառնությունների իրականացման ընթացքում ապահովեն տնտեսվարողների առևտրային գաղտնիությունը: Համապատասխանությունը գնահատող մարմինները պետք է հավատարմագրվեն պետական կառավարման լիազոր մարմնի կողմից: Ընդ որում, օրգանական արտադրանք ներմուծող երկիրը կարող է ցանկացած ժամանակ իրավասու լինել վերստուգում և աուդիտ անցկացնելու հանրապետությունից արտահանվող օրգանական մակնշումը կրող պարենամթերքների նկատմամբ,

4) օրգանական արտադրության ազգային ստանդարտների (տեխնիկական կանոնակարգերի) մշակում և դրանց ներդաշնակեցումը ընդունված չափորոշիչներին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օրգանական արտադրության խթանման համար անհրաժեշտ է ապահովել աջակցությունը խորհրդատվության, տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև լրավճարների ուղղությամբ:

## 8. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի գենետիկական բազմազանության, ներառյալ՝ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովում

Բուսաբուծության զարգացում: Ռազմավարության շրջանակներում բուսաբուծության զարգացման գերակայություններն են՝

1. ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատումը,

2. ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը և միավոր տարածությունից ստացվող եկամտի ավելացումը,

3. բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ներդրումը, մշակության ագրոտեխնիկայի յուրացումը,

4. դաշտային կերարտադրության արդյունավետության բարձրացումը և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների զգալի ավելացումը,

5. 118.3 հազ. հա վարելահողերի լիարժեք օգտագործումը, դրանից առնվազն 80.6 հազ. հա ինտենսիվ մշակություն,

6. բազմամյա տնկարկների հիմնադրում մինչև 6.9 հազ. հա, որից պտղատու այգիներ՝ 3.9, իսկ խաղողինը՝ 3.0 հազ. հա:

#### **Կանխատեսվող մակարդակի ձեռքբերման ռազմավարության ուղղութ-յուններն են՝**

1) հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան մշակության և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորումը, որի համար նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացում, դրաուղղությամբ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում զբաղված տնտեսավա-րողներին խորհրդատվական ու տեղեկատվական աջակցություն,

2) բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի տարածքների ընդլայնման նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքի բարելավման՝ ցածր ինտենսիվության մշակաբույսերը առավել արժեքավոր տեսակներով փոխարինման, հանրապետության պայմաններին համապատասխանող մշակաբույսերի (ոլոռ, սիսեռ, հաճար, բուսական յուղի արտադրության համար նախատեսված տարբեր կուլտուրաներ և այլն) մշակության տեխնոլոգիաների յուրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության, պարարտացման, պաշտպանության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացում,

3) բարձր ավելացված արժեքով գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության խթանման նպատակով գյուղացիական տնտեսություններին պետական տեխնիկական օժանդակությունը, ինչպես նաև բարձր ավելացված արժեքի մշակաբույսերի արտադրության ներդրման փորձացուցադրական տնտեսությունների ձևավորում և այս բնագավառում նպատակային վարկերի տրամադրում,

4) բուսաբուծության ճյուղում բարձր ավելացված արժեքով արտադրության անցման ուղղությամբ հանրապետության տարբեր շրջաններում տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի իրականացում,

5) սերմերի արտադրության, օգտագործման բնագավառում «Սերմերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերի պահանջների կատարում,

6) սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության գիտական ապահովում, երկրորդային սերմնաբուծության ոլորտում մասնավոր ձեռներեցության խթանում և սերմարտադրության հավաստագրում,

7) սորտափորձարկման համակարգի կատարելագործում և ընդլայնում,

8) առանձնակի ուշադրություն դարձնել բազմամյա կերային մշակաբույսերի սերմնաբուծությանը,

9) խաղողի սորտափորձարկման աշխատանքների նպատակաուղղում բարձրորակ, փոխադրա-ունակ, սեղանի, ունիվերսալ և տեխնիկական նոր սորտերի ընտրությանն ու ներդրմանը: Առանձնակի ուշադրություն դարձնել ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը,

10) բույսերի գենոֆոնդի պահպանության, սելեկցիոն նվաճումների լիարժեք օգտագործման և այս ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության զարգացում,

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և դոնոր համայնքի աջակցությամբ Ղարաբաղի գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների բանկի ստեղծում,

բ) սերմերի պահուստային (փոխանցիկ) ֆոնդերի ձևավորում, հանրապետությունում հացահատիկային և կերային մշակաբույսերի, կարտոֆիլի և բանջարեղենի բարձր վերարտադրության սերմացուների կայուն սորտաթարմացման, տեսականու ընդլայնման և սերմերի որակի ստուգման աջակցություն: Հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման ծրագրերի մշակում և իրականացում,

գ) սերմնաբուծության և սերմերի որակի հսկողության բնագավառում «Սերմերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների կատարման, և «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում համապատասխան լրացումների և փոփոխությունների միջոցով՝ ագրարային կանոնների պահպանման պահանջների ուժեղացում:

Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում:

դ) դեղաբույսերի պլանտացիոն անձեցման, հատապտուղների արտադրության և վերամշակման խթանում,

ե) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետբյուջեից և այլ աղբյուրներից կատարվող հատկացումների հաշվին արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով ավելացնել բույսերի առավել վտանգավոր և մասսայական վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների ծավալները: Բուսասանիտարական առավել կայուն վիճակ ստեղծելու նպատակով բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում նաև ընդհանուր օգտագործման տարածքներում (անտառներ, զբոսայգիներ, արտավայրեր),

զ) բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներկրման, պահպանության ու վաճառքի գործընթացների իրավական կարգավորում և տեսչական հսկողության ուժեղացում,

է) բույսերի պաշտպանության ինտեգրացված պայքարի ներդրում, կենսաբանական և էկոլոգիապես անվտանգ միջոցների կիրառության ընդլայնում: 2008 թվականից սկսած՝ մշակել և իրականացնել ծրագրեր՝ մորեխների դեմ արդյունավետ պայքարի համար: Գյուղատնտեսական մշակաբույսերին պատճառված վնասի չափը հասցնել նվազագույնի և կրճողների դեմ պայքար իրականացված տարածքներում դրանց տարածվածությունը կրճատել առնվազն 80 տոկոսով,

ը) տարբեր կազմակերպական ձևերով գործող բույսերի պաշտպանության ծառայությունների ձևավորման խթանում, դրանց կայացմանը մասնագիտական և խորհրդատվական աջակցություն,

11) հանրապետության ներդրումային դիրքի բարելավման և գյուղատնտեսական մթերքների արտահանման խթանման նպատակով ֆիտոսանիտարական պահանջների կատարման ապահովում, ֆիտոսանիտարական վիճակի մոնիթորինգի և տեսչական գործունեության բարելավման աշխատանքների կատարում,

12) հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման նպատակով 2008-2015 թվականներին ծրագրի իրականացման շնորհիվ գյուղատնտեսությունում պարարտացման արդյունավետ սխեմաների կիրառում:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ագրարային հատվածում մշակ-վող և իրականացվող քաղաքականությունն աջակցելու է կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև լանդշաֆտների արդյունավետ կառավարման և բարելավման ծրագրավորմանը: Գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության աջակցությունն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝**

- 1) մշակաբույսերի և դրանց վայրի նախնիների գենետիկ բանկի ստեղծում,
- 2) բնական կերահանդակների բարելավում,
- 3) տնտեսական արժեք ներկայացնող տեսակների պլանտացիաների և բուծարանների ստեղծում,
- 4) անտառների վերականգնում, անտառաշինարարական այլ միջոցառումների իրականացում,
- 5) բնական աղետների (երաշտ, խորշակներ, ողողումներ, սելավներ և այլն) կանխատեսում և հետևանքների մեղմմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում,
- 6) բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործում:

Բուսաբուծության ճյուղի փաստացի և կանխատեսվող հիմնական ցուցանիշները ներկայացված են 1-ին և 2-րդ աղյուսակներում:

## **9. ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխման աջակցություն, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնաբուծության կերի բազայի զարգացում, անասնաբուժական առևտրային կազմակերպությունների զարգացմանը աջակցություն, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության ապահովում

Ուզանավարության շրջանակներում անասնաբուծության զարգացման գերակայություններն են՝

1) թարմ կաթի և կաթնամթերքների, թռչնի, մսի և ձվի նկատմամբ հանրապետության ներքին շուկայի պահանջարկի ամբողջական բավարարում, պանիրների և վերամշակված մսամթերքների արտադրության խթանում,

2) կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման, արոտների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման միջոցով անասնակերերի սեփական արտադրության հնարավորությունների լիարժեք օգտագործում, «Անասնակերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի մշակում,

3) խորհրդատվության ապահովման և նպատակային վարկավորման միջոցով անասնապահական առևտրային կազմակերպությունների ձևավորման խթանում,


4) անասունների կերակրման և պահվածքի բարելավման, տոհմային գործի զարգացման և անասնաբուժասանիտարական աշխատանքների կազմակերպման մեխանիզմների կատարելագործման միջոցով մթերատվության բարձրացում,

5) ալպիական արոտների բարելավման և նպատակային օգտագործման համակարգի ներդրման միջոցով բարձր որակի պանիրների արտադրություն՝ հետագա արտահանման նպատակով,

6) անասնազխաքանակի հաշվառման բարելավման և համարակալման ու տեղեկատվական համակարգի ձևավորման հիման վրա տոհմային գործի ու անասնաբուժական համակարգի բարելավում, ինչպես նաև՝ պետական ուղղակի աջակցության ծրագրերի իրականացում,


7) անասնազխաքանակի կայունացման տնտեսական հիմքի համար անհրաժեշտ սեփական կերարտադրության իրական հնարավորությունների ընդլայնում՝ այդ թվում խտացրած կերի արտադրության ներդրում և խթանում: Դրանից ելնելով՝ մոտակա ժամանակահատվածում կպահպանվի անասնազխաքանակի ավելացման միտումը:

Անասնապահության ճյուղի փաստացի և կանխատեսվող հիմնական ցուցանիշները ներկայացվել են 6-րդ և 7-րդ գծապատկերներում:



**Գծապատկեր 6. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը**





**Գծապատկեր 7. Անասնաբուժական մթերքների արտադրության կանխատեսվող ցուցանիշները**

Գյուղացիական տնտեսությունները կավելացնեն խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի և խոզերի գլխաքանակը, քանի որ, անգամ եկամտաբերության ցածր մակարդակի պարագայում դրանք ապահովում են զբաղվածության կայուն մակարդակ, դրամական հոսքերի սեզոնայնության մեղմացում, թարմ և վերամշակված անասնապահական մթերքների նկատմամբ ներտնտեսային կարիքների բավարարում և բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների առկայություն: Գյուղացիական տնտեսություններում անասնագլխաքանակի ավելացմանը կնպաստեն նաև գյուղական համայնքներում ստեղծվելիք կաթի հավաքման և իրացման կառույցները, սպանդանոցները, արոտավայրերի բարելավման ծրագրերը և դաշտային կերարտադրության զարգացումը:

Անասնապահական մթերքների արտադրության ուղղվածություն ունեցող առևտրային կազմակերպությունները նույնպես կավելացնեն թռչունների, խոզերի և խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որովհետև համեմատաբար խոշոր տնտեսություններն ունեն տոհմային ուղղվածություն, թարմ իրացումից բացի՝ նաև վերամշակման հնարավորություններ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը կնպաստեն նաև մեղվաբուծության և ձկնաբուծության զարգացումը: Այդ նպատակի համար ավելի կընդլայնվի մեղվաբույծներին խորհրդատվական և տեխնիկական աջակցության ցուցաբերումը, մեղվաբույծների հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ ոլորտի օրենսդրական կարգավորման, մեղրի և նրա հետ առնչվող ապրանքների (մեղրամոմ, մեղվի թույն և այլն) արտահանման գործընթացների սկիզբը:

Ձկնաբուծության ոլորտի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ կտարվեն ձկնաբուծական արտադրանքի ավելացման՝ ներքին շուկան բավարարելու ուղղությամբ:

Խորհրդատվությամբ և նպատակային վարկավորման միջոցով առևտրային կազմակերպությունների ձևավորմանն աջակցելը՝ անասնապահական ճյուղի նախընտրելի մասնագիտացմանը համապատասխան, ևս կարևոր նախապայման է: Հիմք ընդունելով վերոհիշյալ գերակայությունները և զարգացման միտումները՝ կանխատեսվել են անասնաբուծության հիմնական ցուցանիշները (աղյուսակներ 3, 4):

Կանխատեսող մակարդակի ապահովման ռազմավարական ուղղություններն են. համալիր միջոցառումների իրականացում, որոնց նպատակն է տոհմային գործի զարգացումը: Գյուղատնտեսության բնագավառում իրականացված վերափոխումներին հաջորդող ժամանակահատվածում տոհմային գործի անտեսման և արհեստական սերմնավորման ծավալների զգալի կրճատման արդյունքում հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի պահպանությունը վտանգվել է, տեղի է ունեցել հետադարձ տրամախաչում և, հատկապես, խոշոր եղջերավոր անասունների տոհմային հատկանիշները վատացել են: Տոհմային գործի զարգացման նպատակով նախատեսվում են՝

1) տոհմային գործի զարգացմանը միտված՝ երկարաժամկետ նպատակային ծրագրի մշակում և իրականացում,

2) հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանություն և սելեկցիոն նպատակներով դրանց օգտագործում, արհեստական սերմնավորման ենթարկվող անասնագլխա-քանակի ավելացում և դրա արդյունքում սերմնատվության ցուցանիշների և մատղաշի տոհմային հատկանիշների բարելավում,

3) գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման համար նախադրյալների ու պայմանների ստեղծում, համապատասխան ծրագրի իրականացում,

4) գյուղատնտեսական կենդանիների գենոֆոնդի պահպանման և կատարելագործման, ինչպես նաև նոր ցեղերի ստեղծմանն ուղղված աշխատանքների իրականացման համար գիտահետազոտական համակարգի ու լիցենզավորված տոհմային անասնաբուծությամբ զբաղվող տնտեսություններին բազմակողմանի աջակցություն,

5) անասնապահական տնտեսությունների՝ որոշակիացված չափանիշների սահմանում և խորհրդատվական ու նպատակային վարկավորման միջոցով այդպիսի տնտեսությունների ձևավորման աջակցություն՝ ըստ զոտիական առանձնահատկությունների:

Կերարտադրության, կերակրման և պահվածքի բարելավում: 1990 թվականի համեմատությամբ՝ դաշտային կերարտադրության ցանքատարածությունների 641 անգամ կրճատման, սահմանված նորմաներից նկատելիորեն շեղված անասունների կերակրման, հատկապես հյութալի և համակցված կերերի օգտագործման ծավալների կրճատման, արոտավայրերի հնարավորությունների չափազանց սահմանափակ օգտագործման հետևանքով խիստ վատացել են անասունների կերակրման և պահվածքի պայմանները: Դրա արդյունքում, տնտեսական վերափոխումներին նախորդող ժամանակահատվածի համեմատությամբ, պակասել են՝ անասնագլխաքանակը և անասունների մթերատվությունը:

Կերարտադրության հնարավորությունների օգտագործման և զարգացման, անասունների կերակրման և պահվածքի բարելավման նպատակով նախատեսվում են՝

1) դաշտային կերարտադրության զարգացման և նրա կառուցվածքի բարելավման հաշվին սեփական արտադրության կերերով ապահովվածության մակարդակի բարձրացում,

2) արոտավայրերի երկարաժամկետ վարձակալության խրախուսում, հեռագնա արոտների արդյունավետ օգտագործմանը նպաստող մեխանիզմների ներդրում, արոտավայրերի վարձակալների կողմից արոտների բարելավմանն ուղղված միջոցառումներին տեխնիկական աջակցության և խորհրդատվության ապահովում,

3) ալպիական արոտների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառում,

4) բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման միջոցով դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավում,

5) հատիկային և համակցված կերերի, ինչպես նաև սպիտակուցային և վիտամինային հավելումների արտադրության գծով փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցություն, ըստ ենթաշրջանների խտացված կերերի արտադրության խթանում պետության օժանդակությամբ,

6) Լեռնային արոտավայրերի դեգրադացման աստիճանի գնահատում և դրանց բարելավման միջոցառումների մշակում:

#### **Անասնաբուժական համակարգի բարելավման նպատակով նախատեսվում են՝**

1) կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելում, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանություն և հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ձևավորում: Սկսած 2008 թվականից հիվանդությունների կանխարգելման ծրագրերի իրականացման միջոցով ապահովել առավել վտանգավոր հիվանդություններով (սիբիրախտ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, դաբաղ, խշխշան պալար, խոզերի ժանտախտ և այլն) վարակված կենդանիների գլխաքանակի նվազեցում: Պարտադիր անասնաբուժական միջոցառումների ցանկում ներառել նաև կատաղության և թռչունների ժանտախտ հիվանդությունները,

2) անասնաբուժության բնագավառի օրենսդրական հիմքերի հետևողական կարգավորում, սննդի անվտանգության պահանջների ուժեղացում, անասնաբուժական մթերքների սանիտարական փորձաքննության համակարգի բարելավման նպատակով այդ գործառույթն իրականացնող սուբյեկտների հավատարմագրում, լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության բարձրացում և կադրային ապահովում,

3) անասնաբուժության զարգացման և հակահամաճարակային միջոցառումների նպատակային ծրագրի իրականացում,

4) նորմատիվային փաստաթղթերի նույնականացումը միջազգայնորեն ընդունված ստանդարտներին, տեսչական հսկողության ուժեղացում,

5) տարածաշրջաններում պետական անասնաբուժական ծառայությունների վերակազմավորման, դրանց գույքի ապապետականացման և պետության աջակցությամբ մասնավոր անասնաբուժական ծառայության ձևավորման խթանում,

6) գյուղական համայնքներում անասնաբույժների ինստիտուտի ամրապնդում՝ դրանց նյութատեխնիկական բազայի համալրման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից հատկացումների ավելացման և վճարովի անասնաբուժական ծառայությունների ընդլայնման միջոցով:

### **10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ**

**Ոլորտի զարգացում և վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխում: Առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և արտադրանքի մրցունակության բարձրացում: Մարքեթինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացում**

Արցախում ավանդաբար զարգացած էր գինեգործությունը, բանջարեղենի, մսի և կաթի վերամշակման ու գարեջրի արտադրությունը: Այս համակարգը հիմնականում ուղղված էր ներքին պահանջարկի բավարարմանը, սակայն գինիների զգալի մասն արտահանվում էր Խորհրդային Միության հանրապետություններ, մասնավորապես, Ռուսաստան: Տնտեսական բարեփոխումներին հաջորդող ժամանակահատվածի հարաբերությունների փոփոխությունները ցույց տվեցին, որ անցյալից ժառանգած գործարանները՝ իրենց հզորություններով և տեխնոլոգիական մակարդակով, չեն բավարարում ներքին և արտաքին շուկայի ներկայիս պահանջները: Ուստի, մասնավորեցումից հետո խիստ սահմանափակ թվով վերամշակող ընկերություններ ենթարկվեցին տեխնոլոգիական վերազինման և թողարկում են ներքին շուկայում մրցունակ արտադրանք:

90-ական թվականներին գյուղատնտեսական հումք վերամշակող համակարգի հզորությունների սահմանափակումը մեծապես ազդեց խաղողի այգիների տարածության կրճատման, ինչպես նաև հումք մատակարարող գյուղացիական տնտեսությունների վրա:

Արցախի հաղորդակցության ուղիների արդի վիճակում գինեգործության զարգացման միակ ուղին սեփական հումքի վրա մրցունակ արտադրության զարգացումն է: Այսինքն, հիմնական ճանապարհը բարձրորակ գինիների և կոնյակների արտադրությունն է: Այդ նշանակում է, որ նոր հարաբերությունների համակարգում հարկավոր է արմատապես վերանայել այգիների տեղաբաշխումը, դրանց սորտային կազմը, գինեգործության ու խաղողագործության զարգացման ուղիությունները:

Վերջին տարիներին գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգում նկատելի է արտադրական ծավալների նվազեցում: Պտուղ-բանջարեղենի և խաղողի վերամշակող արդյունաբերության արտադրության փաստացի և կանխատեսվող ծավալները տրված են 5-րդ և 6-րդ աղյուսակներում:

**Ուազմավարական առումով այս համակարգի զարգացման գերակայություններն են՝**

1) արտադրական հզորությունների ընդլայնում, տեսականու մեծացում և արտադրանքի մրցունակության բարձրացում,

2) շուկայահանման գործառույթների ակտիվացում և արտահանման ծավալների ավելացում,

3) որակի կառավարման, ստանդարտացման և հավաստագրման միջազգային չափանիշները բավարարող համակարգի ներդրում,

4) վերամշակող արտադրության ռացիոնալ տեղաբաշխում, հատկապես Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հաղուրթի և Քաշաթաղի շրջաններում վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանում:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգի պետական աջակցության ուղղություններն են՝

1) արտաքին առևտրի ռազմավարության հստակեցում,

2) բիզնես-տեղեկատվության տարածում, մարքեթինգային և գիտական հետազոտությունների ընդլայնում,

3) մասնագիտական կադրերի պատրաստում և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման տեխնիկական աջակցություն,

4) հումք արտադրողների և վերամշակողների միջև կոոպերացիայի ձևավորմանն աջակցություն,

5) շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծմանն աջակցություն,

6) խաղողագործության, գինեգործության և մարքեթինգային բնագավառում կադրերի պատրաստում, վերապատրաստում, գիտական հետազոտությունների իրականացում և դրանց արդյունքների ներդրմանն աջակցություն,

7) վերամշակող արդյունաբերության, հատկապես գինիների, մուրաբաների, ջեմերի, կոնֆիտյուրների, չրերի, համեմունքների, ազգային աղանդերների և այլնի (դոշաբ, ըմպելիքների և թեյերի համար խոտաբույսերի և դեղաբույսերի փաթեթավորում և այլն) արտադրության ուղղությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանում,

8) վերամշակող կազմակերպությունների և տեխնիկական սորտերի խաղող արտադրողների միջև պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացին աջակցություն՝ այդ ուղղությամբ գործող մեխանիզմների մշակում, որոնք պետք է միտված լինեն վարկավորման մատչելիության բարձրացմանը,

9) խաղողագործության և գինեգործության զարգացման գործում տեղական և արտաքին ներդրումների համար բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորում, հումքի արտադրության և վերամշակող համատեղ կազմակերպությունների ստեղծման խթանում,

10) ներքին և արտաքին շուկաներում խաղողի վերամշակումից ստացված արտադրատեսակների մրցունակությունը բարձրացնելու նպատակով փոխշահավետ առևտրային կապերի ընդլայնում,

11) քաղաքական կայունության և մակրոտեխնիկական նպաստավոր միջավայրի միջոցով գործարարության ռիսկերի նվազեցում և ներդրումային կանխատեսելի պայմանների ապահովում:

Գյուղական համայնքներում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ձևավորմանը կուղղվի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման» հայեցակարգով նախատեսված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, հայեցակարգը նպատակաուղղված է հանրապետության շրջաններում փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների արդյունավետ տեղաբաշխմանը: Ըստ արտադրական ուղղությունների՝ հայեցակարգի իրականացումը կնպաստի փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների թվաքանակի 5-6 անգամ ավելացմանը:

**11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է արտադրատեխնիկական սպասարկման ենթակառուցվածքների զարգացած համակարգ:

Արցախի լեռնային մակերևույթը, փոքր տարածքի վրա տարբեր բնական գոտիների առկայությունը և կլիման ռիսկային գյուղատնտեսության բնութագրիչներն են: Ուստի, սպասարկող ենթակառուցվածքների զարգացումը պետք է առավելագույնս համապատասխանի հանրապետության առանձնահատկություններին և նպաստի գյուղատնտեսական ռիսկերի մեղմացմանը: Առաջնային նշանակություն ունեն արտադրատեխնիկական սպասարկումների, բնական անբարենպաստ երևույթների մեղմանն ուղղված համակարգերի զարգացումը:

Գյուղատնտեսություն սպասարկող ենթակառուցվածքների զարգացման գերակայություններն են.

1) կոոպերացման սկզբունքով գյուղատնտեսությանը սպասարկող կառույցների ձևավորման աջակցություն և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում,

- 2) գյուղացիական տնտեսությունների տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով տեխնիկական ռեսուրսներով ապահովվածության մակարդակի բարձրացում,
- 3) բնական աղետների դեմ պայքարի նոր տեխնոլոգիաների ներդրում,
- 4) գյուղական ճանապարհների նորոգում:

#### **1. Արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում**

Արտադրատեխնիկական սպասարկումների զարգացումը և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացումը գյուղատնտեսության ինտենսիվացման կարևոր ուղղություններից է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որդեգրել է արտադրատեխնիկական սպասարկման կազմակերպությունների ապապետականացման և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացման անուղղակի աջակցության քաղաքականություն:

Հետևաբար սահմանվում են արտադրատեխնիկական սպասարկման զարգացման և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացման հետևյալ ռազմավարական ուղղությունները.

- 1) արտադրատեխնիկական սպասարկումների իրականացում՝ գերազանցապես առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի միջոցով, բնագավառի սպասարկողների համար մրցանակային հավասար պայմանների ստեղծում,
- 2) արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող ընկերությունների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու նպատակով՝ տեխնիկայի ձեռքբերման լիզինգային մեխանիզմների ներդրմանը աջակցություն,
- 3) հանրապետության ուղղաձիգ գոտիականության առանձնահատկություններին համապատասխան տեխնիկայի շարժումն օգտագործման կազմակերպման աջակցություն,
- 4) տարբեր դրամաշնորհների միջոցով նոր տեխնիկայի և այլ նյութական միջոցների ձեռքբերման քաղաքականության շարունակում,
- 5) տարբեր դրամաշնորհային ծրագրերի և պետական աջակցության շրջանակներում ներմուծված հանքային պարարտանյութերի և այլ ռեսուրսների մատակարարում՝ գյուղացիական տնտեսությունների համար մատչելի պայմաններով:

#### **2. Գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացում**

Գյուղական բնակչության կենսամակարդակի և գյուղատնտեսության ճյուղի արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը: Շուկայական հարաբերությունների ձևավորման անցումային շրջանում դեռևս կապահպանվի պետության կողմից այդ ենթակառուցվածքներին ուղղակի աջակցության անհրաժեշտությունը: Հետագայում աստիճանաբար կմեծանա տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի մասնակցությունը սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ու դրանց կառավարմանը: Սույն ռազմավարության շրջանակներում կարևորվում է գյուղի սոցիալական զարգացման հետևյալ ուղղությունները.

- 1) կրթամշակութային և մարզական օբյեկտների շինարարություն և վերանորոգում,
- 2) ագրոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակում և իրականացման տեխնիկական աջակցություն,
- 3) փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում,
- 4) գյուղաբնակ կանանց գործարար ակտիվության բարձրացման նպատակային ծրագրերի իրականացում,
- 5) 2008 թվականից գյուղատնտեսության սուբսիդավորման և հարկային համակարգի հստակեցում:

#### **3. Գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում**

Արցախի ռիսկային գյուղատնտեսության պայմաններում նախատեսվում են ռիսկերի կանխատեսման, հնարավորինս կանխարգելման և հետևանքների հաղթահարման հետևյալ ուղղությունները.

##### **Բնական ռիսկերի գծով.**

- 1) գյուղատնտեսության փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրմանը աջակցություն,
- 2) հակակարկտային համակարգի վերականգնման փորձնական ծրագրի իրականացում,
- 3) ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրում,
- 4) երաշտի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգում,
- 5) հակահեղեղային և սողանքների վերացման միջոցառումների իրականացում,
- 6) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի կանխատեսմանն ու ծրագրավորման համակարգի ներդրում:

##### **Մակրոտնտեսական ռիսկերի գծով**

Ոռոգման ջրի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումը, ինչպես նաև ավելացված արժեքի հարկով հարկման ռիսկերի ազդեցությունը գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության վրա մեղմացնելու նպատակով նախատեսվում է.

- 1) գյուղատնտեսական արտադրանքների իրացումից ավելացված արժեքի հարկի վճարման կանոնակարգման հայեցակարգի ընդունում,
- 2) գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հստակեցում:

#### **4. Գյուղական ճանապարհների վերականգնում**

Գյուղի սոցիալական զարգացման և գյուղատնտեսության արդյունավետ-տույժի բարձրացման նպատակով «Գյուղական ճանապարհների վերա-կանգնման» ծրագրերի կազմում և իրականացում:

Նշվածից բացի, այլ ծրագրերով պետք է ապահովվի սահմանամերձ և լեռնային գյուղական համայնքների ճանապարհների առաջնահերթ կառուցումն ու վերանորոգումը:

## 12. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՆԱՎՈՒՄ

Գյուղատնտեսական արտադրանքների իրացումից ավելացված արժեքի հարկի արտոնության վերացումը պահանջում է նոր մոտեցումներ և կառուցակարգեր: Հակառակ պարագայում այդ միջոցառման հետևանքով կառաջանան մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես այն կհանգեցնի.

1) գյուղացիական տնտեսությունների վերարտադրողական կարողությունների նվազման,  
2) գյուղատնտեսական ապրանքայնության մակարդակի և գյուղացիական տնտեսությունների եկամուտների կրճատման,

3) տնտեսվարող սուբյեկտների մրցունակության թուլացման,  
4) հարկային վարչարարության բարդության, քանի որ ավելացված արժեքի հարկի արտոնության համատարած վերացումը, իրականացման տեսանկյունից գործնականորեն անհնար է՝ հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտների զգալի քանակությունը:

Վերոշարադրյալից ելնելով՝ առաջարկվում է գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի հարկի կարգավորման հետևյալ ուղղությունները՝

1) բարձրացնել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների ավելացված արժեքի հարկով չհարկվող բարձր շեմ:

2) ավելացված արժեքի հարկի նվազեցման դրույքաչափի սահմանում:

Նպատակահարմար է ավելացված արժեքի հարկի ներկայիս հարկվող շրջանառությունից 20 տոկոս դրույքաչափը գյուղատնտեսության ոլորտում սահմանել 10 տոկոս:

3) «Հաստատագրված դրույքաչափի համակարգի» ներդրում:

Որպես չհարկվող շեմ, այս դեպքում կիրառվում է գյուղատնտեսական հողատեսքերի և անասնազլխաքանակի որոշակի մակարդակ: Դրանից բարձրի դեպքում սահմանվում է միավոր հողատարածքի կամ անասնազլխաքանակի հաշվով ավելացված արժեքի հարկի հաստատագրված դրույքաչափ:

Նշված քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է մեծածավալ նախապատրաստական աշխատանք, որի շրջանակներում առանձնացվում են հետևյալ միջոցառումները.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան օրենքի ընդունում, որով պետք է հստակեցվի գյուղատնտեսական արտադրողների իրավական կարգավիճակը և դրանից բխող իրավա-հարաբերությունները,

2) գյուղացիական տնտեսությունների հարկման մեխանիզմների սահմանման և հստակեցման վերաբերյալ հարկային հարաբերությունները կարգավորող օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարում, որով կսահմանվեն գյուղատնտեսական արտադրողների համար ավելացված արժեքի հարկով չհարկվող շեմը, նվազեցված և տարբերակված դրույքաչափերը: «Հաստատագրված դրույքաչափի համակարգի» կիրառման դեպքում պետք է սահմանվի ըստ տնտեսության կարգավիճակի և աշխարհագրական դիրքի հողատարածության և անասնազլխաքանակի չհարկվող շեմը, ինչպես նաև՝ հաստատագրված դրույքաչափը,

3) համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ընդունում, որով կհստակեցվեն ոլորտի պետական աջակցության ուղղությունները և գյուղատնտեսության սուբսիդավորման հետ կապված իրավահարաբերությունները,

4) «Գյուղատնտեսության համատարած հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ընդունում և 2012-2013 թվականներին համատարած հաշվառման անցկացում,

5) հարկային մարմինների կողմից պոտենցիալ հարկատուների հաշվառում,

6) գյուղատնտեսական արտադրողների համար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցման ծրագրերի իրականացում:

Նշված միջոցառումների իրականացումից կապահովվեն հետևյալ արդյունքները.

1) ավելացված արժեքի հարկի հարկման բազայի և պետական բյուջեի եկամուտների էապես մեծացում, գյուղատնտեսական հումք վերամշակող կազմակերպությունների մրցունակության բարձրացում,

2) գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ ներդրանքների դիմաց վճարված ավելացված արժեքի հարկի հաշվանցում,

3) գյուղատնտեսական արտադրության հարկային բեռի թեթևացում,

4) գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական հիմքերի բարելավում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում և ենթաշրջաններում նախընտրելի արտադրական ուղղություններով գյուղատնտեսական և գյուղատնտեսական հումքի վերամշակման տնտեսվարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության կարևոր գործոն է նպատակային վարկավորումը:

Գյուղատնտեսության վարկավորման գործընթացում կկարևորվի գրավադրման մեխանիզմների բարելավումը՝ մասնավորապես գրավի առարկայի շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև մատչելի տոկոսադրույքի և վարկավորման ժամկետների ապահովումը, նաև կհստակեցվեն առանց գրավադրման վարկավորման մեխանիզմները:

### **13. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈՒՐՈՐՏԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

1) Գյուղատնտեսության ոլորտի տեղեկատվության, խորհրդատվության, գիտական և կադրային ապահովման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ պետական աջակցության քաղաքականության շարունակում,

2) գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի ստեղծում և աջակցություն,

3) շրջաններում գիտական, ուսումնական և խորհրդատվական կառույցների ստեղծում,

4) ուսումնական համակարգի հետևողական բարեփոխումներով արդիական տեխնոլոգիաներին իրագել, աշխատանքի շուկայում մրցունակ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման ապահովում: Ներկայիս պահանջարկի հետ կապված՝ գյուղատնտեսական քոլեջում կամ այլ ուսումնական հաստատությունում պետպատվերի շրջանակներում իրականացնել շրջակա միջավայրի պահպանման և բնական պաշարների արդյունավետ օգտագործման, բույսերի պաշտպանության, մեխանիզատորի, անտառահիդրոմելիորատորի, մենեջմենթի (կառավարման), սպառողական ապրանքների որակի փորձաքննության մասնագետների պատրաստման գործընթացը,

5) գյուղատնտեսության աջակցության հանրապետական և շրջանային կենտրոնների տեխնիկական վերազինման և մասնագիտական կարողությունների հզորացման միջոցով խորհրդատվական համակարգի արդյունավետության բարձրացում, ֆերմերների առաջնային կարիքների բացահայտում և դրանց բավարարման գործունե համակարգի ձևավորում:

### **14. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄ**

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման միտումների ճիշտ գնահատումը, հիմնավորված քաղաքականության իրականացումը անհնար է առանց ճյուղի տարբեր կողմերը բնութագրող վիճակագրական տվյալների որակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրագործման: Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավմանը կնպաստի 2012-2013 թվականներին գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագրի իրագործումը: Այն հնարավորություն կտա, ըստ հանրապետության համայնքների, ունենալ գյուղատնտեսական ռեսուրսային ներուժի առավել ամբողջական պատկերը:

Այսպիսով, գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագրի իրականացումը հնարավորություն կտա՝

1) ընդլայնել գյուղատնտեսության ոլորտի իրավիճակը բնութագրող վիճակագրական ցուցանիշների շրջանակը և բարձրացնել դրանց որակը, ունենալ գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ էլեկտրոնային մշակված տվյալների բազա,

2) գնահատել գյուղատնտեսությունում ներձյուղային կառուցվածքային փոփոխությունները:

Գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների իրավական կարգավիճակի և իրավա-հարաբերությունների կարգավորմանը կնպաստակառուցվող 2009-2010 թվականներին «Գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագծի և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակումը:

Դրանց առկայությունը պայմաններ կստեղծի մշակվող ծրագրային միջոցառումների իրականացման համար:

## **VI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

Սույն ռազմավարության խնդիրների լուծման շրջանակներում պետությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) աջակցություն արտադրության խոշոր ինժեներական (ռոզգում, ջրարբիացում, ճանապարհաշինություն և այլն) և գյուղի սոցիալական ենթակառուցվածք-ների զարգացմանը,

2) օրենսդրական հիմքերի ստեղծում, ազատ մրցակցության ապահովում,

3) գյուղատնտեսական հողերի մոնիթորինգ և պահպանություն,

4) անասունների և բույսերի համաճարակային և կարանտինի հիվանդությունների կանխարգելում,

5) սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի ստեղծում,

- 6) ոլորտի գիտատեխնիկական ապահովում, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների աջակցություն,
- 7) զարգացման ծրագրերի ընդունում և դրանց իրականացման պայմանների ապահովում,
- 8) Հայաստանի Հանրապետության և այլ երկրների հետ համագործակցության զարգացում և շուկայահանման հնարավորությունների ընդլայնում:

**VII. ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Սույն ռազմավարության իրականացումից ակնկալվում է հանրապետության ագրարային ոլորտի կայուն և դինամիկ առաջընթաց, որը կդրսևորվի տնտեսական և սոցիալական հետևյալ արդյունքներով.

- 1) 2015 թվականին գյուղատնտեսական արտադրության ծավալը 2006 թվականի մակարդակը կգերազանցի 80-90 տոկոսով,
- 2) համախառն արտադրանքի ավելացումը կապահովվի գերազանցապես աշխատանքի արտադրողականության ավելացման հաշվին,
- 3) գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը 2015 թվականին կհասնի մինչև 70 տոկոսի, որը հնարավորություն կտա էականորեն ավելացնել գյուղացիական տնտեսությունների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները,
- 4) 2015 թվականին ցանքային տարածքը կհասցվի 80.6 հազ. հա, որը կգերազանցի 2004-2007 թվականների մակարդակը 28.6 տոկոսով: Նույն թվականին կերային մշակաբույսերի տարածությունը կհասցվի 8.0, իսկ բազմամյա տնկարկներինը՝ 6.9 հազ. հա, 2007 թվականի 11.5 և 4689.2 հա-ի դիմաց,
- 5) դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնապահության ներձյուղային կառուցվածքում՝ կավելանա պտղի, խաղողի, կարտոֆիլի, բանջարեղենի, կերային մշակաբույսերի համախառն արտադրությունը: Անասնապահության մեջ նկատելիորեն կավելանա տավարաբուծությունից, խոզաբուծությունից, ոչխարաբուծությունից ստացվող մթերքների տեսակարար կշիռը,
- 6) բարձր բերքատու սորտերի շրջանացման և մշակության տեխնոլոգիաների արդիականացման շնորհիվ կանխատեսվող ժամանակահատվածի վերջում, 2004-2007 թվականների համեմատությամբ հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի բերքատվությունը կաճի համապատասխանաբար 96.9, 31 և 38.9 տոկոսով, իսկ պտղի և խաղողի բերքատվությունը՝ 3.6 և 1.7 անգամ,
- 7) տոհմային գործի զարգացման, կերակրման և պահվածքի բարելավման շնորհիվ 2015 թվականի վերջին մեկ կովի կաթնատվության մակարդակը կհասցվի 2650 կիլոգրամի,
- 8) զգալիորեն կավելանան պարենի և գյուղատնտեսական հումքի արտահանման ծավալները:

Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունը ներմուծում է մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ: Այսպես, ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2007 թվականի հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 421.2 հազ. տոննա ցորեն, 79.3 հազ. տոննա եգիպտացորեն, 34.9 հազ.տոննա միս, 2.0 հազ. տոննա կարագ, 0.9 հազ. տոննա պանիր և այլ գյուղատնտեսական մթերքներ: Անշուշտ Հայաստանի Հանրապետությունում նույնպես մշակվում են գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագրեր, որոնց նպատակն է նվազեցնել հիմնական պարենամթերքների դեֆիցիտը, սակայն, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից ներմուծվող գյուղմթերքների ծավալները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության համապատասխան ոլորտների՝ ըստ ներկայացվող ծրագրի զարգացման արդյունքում, մեր հանրապետությունը Հայաստանի Հանրապետության շուկայում վերոհիշյալ մթերքների իրացման խնդիր չի ունենալու:

9) 2015 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը (փաստացի գներով) կկազմի 53659.7 մլն դրամ, որից բուսաբուծությունը՝ 33713.0 մլն դրամ, իսկ անասնաբուծությունը՝ 19946.7 մլն դրամ,

10) կբարձրանա հանրապետության բնակչության պարենային անվտանգության մակարդակը, զգալիորեն կավելանա կարևորագույն պարենամթերքների տեղական արտադրության հաշվին ապահովվածությունը, կմեղմանա գյուղական բնակչության արտահոսքը:

Բուսաբուծական և անասնապահական մթերքների փաստացի և կանխատեսվող արտադրական ցուցանիշներն ու համախառն արտադրանքը ներկայացված են 7-րդ, 8-րդ և 9-րդ աղյուսակներում:

Ուազմավարության կատարումն ապահովող միջոցառումները ներկայացված են թիվ 2 հավելվածում:

**Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության խնդիրները, միջնաժամկետ ու երկարաժամկետ քաղաքականության գերակայությունները և առաջնահերթությունները չեն հավակնում լինել անփոփոխ, նամանավանդ, երբ ծրագրային ցուցանիշները բավականին հեռու են միջազգային իրականությունից:**

Ծրագրի լիարժեք իրականացման և, հատկապես, ժամանակակից զարգացման մակարդակի ապահովման խնդիրները հնարավոր չէ լուծել միայն պետական բյուջեի միջոցների հաշվին: Դրանք պահանջում են ավելի մեծ ներդրումներ, որոնց աղբյուր կարող են հանդիսանալ հայկական սփյուռքի, դոնոր հանրության և գործարարների համակարգված աջակցությունը:



ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆՆԱՏԵՍՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Մշակաբույսերը	2004թ.		2005թ.		2006թ.		2007թ.		2010թ.		2015թ.	
	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%	հա	%
Սև ցել	0	0.0	0	0.0	0	0.0	13719.4	25.1	15000.0	20.0	15000.0	18.6
Հացահատիկային մշակաբույսեր	57395.8	95.1	63620.0	95.7	56822.0	95.4	47979.6	71.2	50000.0	66.9	53000.0	65.8
<i>որից՝ եգիպտացորեն</i>	<i>476.4</i>	<i>0.8</i>	<i>407.2</i>	<i>0.6</i>	<i>400.2</i>	<i>0.7</i>	<i>300.1</i>	<i>0.4</i>	<i>5000.0</i>	<i>6.7</i>	<i>8000.0</i>	<i>9.9</i>
Կարտոֆիլ	1406.8	2.3	1395.2	2.1	1400.2	2.3	1210.5	1.8	1600.0	2.2	2000.0	2.5
Բանջարեղեն	1124.2	1.9	1150.1	1.7	1097.5	1.8	1019.5	1.5	1800.0	2.4	2100.0	2.6
Բոստան	254.7	0.4	267.9	0.4	226.3	0.4	278.1	0.4	250.0	0.4	300.0	0.4
Կերային մշակաբույսեր	96.0	0.2	33.5	0.1	35.5	0.1	11.5	0.0	6000.0	8.0	8000.0	9.9
Տեխնիկական մշակաբույսեր	85.8	0.1	9.0	0.0	3.0	0.0	1.5	0.0	90.0	0.1	200.0	0.2
<b>Ընդամենը ցանքային տարածությունը</b>	<b>60363.3</b>	<b>100.0</b>	<b>66475.7</b>	<b>100.0</b>	<b>59584.5</b>	<b>100.0</b>	<b>64220.1</b>	<b>100</b>	<b>74740.0</b>	<b>100.0</b>	<b>80600.0</b>	<b>100.0</b>
Պտուղ	1639.4	41.8	1640.9	40.6	1632.7	40.2	1890.7	40.3	2000.0	37.0	3000.0	43.5
այդ թվում՝ բերքատու	1588.2	40.5	1617.3	40.0	1607.2	39.5	1820.4	38.8	1650.0	30.5	2185.0	31.6
Խաղող	1440.2	36.7	1546.3	38.3	1777.0	43.7	1892.5	40.4	2500.0	46.2	3000.0	43.4
այդ թվում՝ բերքատու	1271.2	32.4	1404.5	34.8	1666.4	41.0	1786.3	38.1	1800.0	33.3	2600.0	37.6
Թուփ	843.6	21.5	853.3	21.1	655.5	16.1	906.0	19.3	906.0	16.8	906.0	13.1
այդ թվում՝ բերքատու	808.8	20.6	846.5	21.0	649.0	16.0	852.1	18.2	906.0	16.8	906.0	13.1
<b>Ընդամենը բազմամյա տնկարկներ</b>	<b>3923.2</b>	<b>100.0</b>	<b>4040.5</b>	<b>100.0</b>	<b>4065.2</b>	<b>100.0</b>	<b>4689.2</b>	<b>100</b>	<b>5406.0</b>	<b>100.0</b>	<b>6906.0</b>	<b>100.0</b>

ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Մշակաբույսերը	2004թ.			2005թ.			2006թ.			2007թ.			2010թ.			2015թ.		
	հա	g/հա	հազ. տ	հա	g/հա	հազ. տ	հա	g/հա	հազ. տ	հա	g/հա	հազ. տ	հա	g/հա	հազ. տ	հա	g/հա	հազ. տ
Սև գել	0	0	0	0	0	0.0	0	0	0.0	13719.4	0	0.0	15000.0	0	0	15000.0	0	0
Հացահատիկային մշակաբույսեր	57395.8	14.2	81.50	63620.0	13.9	88.4	56822.0	11.3	64.2	47979.6	11.0	52.9	50000.0	23.9	119.5	53000.0	25.0	132.5
այդ թվում՝ եգիպտացորեն	476.4	33.6	1.6	407.2	31.9	1.3	400.2	23.7	0.95	300.1	36.2	1.1	5000.0	50.0	25.0	8000.0	50.0	40.0
Կարտոֆիլ	1406.8	93.4	13.14	1395.2	94.9	13.2	1400.2	73.4	10.3	1210.5	73.1	8.8	1600.0	96	15.36	2000.0	110	22
Բանջարեղեն	1124.2	86	9.67	1150.1	84.7	9.7	1097.5	80.2	8.8	1019.5	80.1	8.2	1800.0	100	18	2100.0	115	24.15
Բոստան	254.7	176.7	4.5	267.9	171.7	4.6	226.3	141.4	3.2	278.1	208.3	5.9	250.0	225	5.63	300.0	250	7.5
Կերային մշակաբույսեր	96.0			33.5			35.5			11.5			6000.0			8000.0		
Տեխնիկական մշակաբույսեր	85.8			9.0			3.0			1.5			90.0	12.5	0.11	200.0	15	0.3
<b>Ընդամենը ցանքային տարածությունը</b>	<b>60363.3</b>			<b>66475.7</b>			<b>59584.5</b>			<b>64220.1</b>			<b>74740.0</b>			<b>80600.0</b>		
Պտուղ	1639.4	X	X	1640.9	X	X	1632.7	X	X	1890.7	X	4.2	2000.0	X	X	3000.0	X	X
այդ թվում՝ բերքատու	1588.2	3.2	0.51	1617.3	16.2	2.62	1607.2	12.8	2.06	1820.4	22.7	4.1	1650.0	25	4.13	2185.0	50	10.93
Խաղող	1440.2	X	X	1546.3	X	X	1777.0	X	X	1892.5	X	13.5	2500.0	X	X	3000.0	X	X
այդ թվում՝ բերքատու	1271.2	43.8	5.57	1404.5	51.8	7.28	1666.4	37.1	6.18	1786.3	74.4	13.3	1800.0	80	14.40	2600.0	90	23.4
Թուփ	843.6	X	X	853.3	X	X	655.5	X	X	906.0	X	5.3	906.0	X	X	906.0	X	X
այդ թվում՝ բերքատու	808.8	1.4	0.11	846.5	13.1	1.11	649.0	26.6	1.73	852.1	61.3	5.2	906.0	50	4.5	906.0	60	5.4
<b>Ընդամենը բազմամյա տնկարկներ</b>	<b>3923.2</b>			<b>4040.5</b>			<b>4065.2</b>			<b>4689.2</b>			<b>5406.0</b>			<b>6906.0</b>		

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ  
ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ  
(ՏԱՐԵՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ)**

(հազար գլուխ)

Գյուղատնտեսական կենդանիների տեսակը	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2010թ.	2015թ.
Խոշոր եղջերավորներ	43.6	45.0	44.6	45.6	46.0	50.0	60.0
այդ թվում՝ կովեր	20.1	20.5	19.7	20.3	20.6	25.0	29.0
խոզեր	13.8	12.1	20.2	30.3	7.2	17.0	50.0
Ոչխարներ և այծեր	44.0	42.0	41.1	43.9	47.7	55.0	65.0
Թռչուններ	363.9	244.7	283.1	305.0	316.0	380.0	475.0
Ձիեր	2.5	2.5	2.6	2.6	2.7	3.0	3.5
Ավանակներ	4.6	4.5	4.2	4.0	3.8	4.0	3.0

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ**

Ցուցանիշները	Չափի միավորը	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2010թ.	2015թ.
1	2	3	4	5	6	7	8	9
1 կովի միջին կաթնատվությունը	կգ	1444	1556	1557	1547	1481	2000	2650
Ընդամենը. կաթի համախառն արտադրությունը	հազ. տ	30.9	32.4	32.4	31.6	30.4	50.0	77.0
1 տավարի միջին օրական քաշաձը	գրամ	300	305	310	315	330	400	450
Ընդամենը. իրացվող տավարի միս՝ կենդանի քաշով	տոննա	1884.3	1986.2	2077.7	2020.0	2008	2555	3400
1 ոչխարի և այծի միջին օրական քաշաձը	գրամ	70	70	80	80	80	90	95
Ընդամենը. իրացվող ոչխարի և այծի միս, կենդանի քաշով	տոննա	433.2	430.0	415.8	427.9	432.2	580.0	800.0

1 խոզի միջին օրական քաշաճը	գրամ	180	190	195	200	200	210	230
Ընդամենը. իրացվող խոզի միս, կենդանի քաշով	տոննա	374.8	343.2	428.9	669.9	1209.1	1100	1800

1	2	3	4	5	6	7	8	9
1 թռչունի կենդանի քաշը	կգ	1.0	1.0	1.2	1.5	1.5	1,5	1,6
Ընդամենը. իրացվող թռչնի միս, կենդանի քաշով	տ	1091,7	734,1	849,3	882,3	888.2	1300	1625
Ընդամենը. մսի իրացում կենդանի քաշով	տ	3784.0	3493.5	3701.7	4000.0	4537.3	5535	7625
Մեկ հավի տարեկան ծվատվությունը	հատ	127	114	126	115	107	155	175
Ընդամենը. ծվի արտադրությունը	հազ. հատ	15288.0	14595.1	16028.9	13198.2	13355	21500	25000
1 ոչխարի միջին բրդատվությունը	կգ	2.16	2.20	2.23	2.39	2.0	2.6	2.8
Բրդի համախառն արտադրությունը	տ	63.0	71.8	71.3	77.2	69.7	110.0	140.0

**ԱՂՅՈՒՄԱԿ 5**

**ՊՏՈՒԴ-ԲԱՆՋԱՐԵԴՆ ԵՎ ԽԱՂՈՂ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ 2003-2006 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
Պահածո, ընդամենը	հազ. պայմ. տուփ	336.9	414.4	423.7	238.7	-
այդ թվում՝ բանջարեղենի	հազ. պայմ. տուփ	50.9	140.3	201.4	78.1	-
մրգի	հազ. պայմ. տուփ	286.0	274.1	222.3	160.0	-
Խաղողի գինի	հազ. դալ	19.34	14.6	17.2	12.3	16.7
Կոնյակ	հազ. դալ	2.7	2.6	0.9	0.9	0.9

**ԱՂՅՈՒՄԱԿ 6**

**ՊՏՈՒԴ-ԲԱՆՋԱՐԵԴՆ ԵՎ ԽԱՂՈՂ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱՎԱԼՆԵՐԸ**

Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2010թ.	2015թ.
Պահածո, ընդամենը	հազ.պայմ. տուփ	3000.0	5000.0
այդ թվում՝ բանջարեղենի	հազ.պայմ. տուփ	2100.0	3500.0
մրգի	հազ.պայմ. տուփ	900.0	1500.0
Խաղողի գինի	հազ.դալ	38.0	70.0

Կոնյակի բացարձակ սպիրտ	հազ.դալ	97.0	156.8
------------------------	---------	------	-------

ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍԿՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

Մշակաբույսեր	2007թ.				2010թ.				2015թ.			
	հա	գ/հա	հազ.տ	համա- խառն արտադրանք (մլն. դրամ)	հա	գ/հա	հազ.տ	համա- խառն արտադրանք (մլն. դրամ)	հա	գ/հա	հազ. տ	համա- խառն արտադրանք (մլն. դրամ)
Սև ցել	13719.4	0	0	0	15000,0	0	0	0	15000,0	0	0	0
Հացահատիկային մշակաբույսեր	47979.6	11.0	52.9	5853.6	50000.0	23.9	119.5	13223.0	53000.0	25.0	132.5	14660.0
այդ թվում՝ եգիպտացորեն	300.1	36.2	1.1	132.0	5000.0	50.0	25.0	3000.0	8000.0	50.0	40.0	4800.0
Կարտոֆիլ	1210.5	73.1	8.8	1746.3	1600.0	96.0	15.36	3048.0	2000.0	110.0	22.0	4365.5
Բանջարեղեն	1019.5	80.1	8.2	1537.6	1800.0	100.0	18	3375.0	2100.0	115.0	24.15	4528.5
Բոստան	278.1	208.1	5.9	507.8	250.0	225.0	5.63	485.0	300.0	250.0	7.5	645.5
Կերային մշակաբույսեր	11.5			2158.1	6000.0	225.8	135.5	2890.0	8000.0	226.0	180.8	3864.0
Տեխնիկական մշակաբույսեր	1.5				90.0	12.5	0.11	55.0	200.0	15.0	0.3	150.0
Պտուղ	1890.7		4.2	728.3	2000.0		4,2	728,0	3000.0		11,2	1942,0
այդ թվում՝ բերքատու	1820.4	22.7	4.1	711.0	1650.0	25.0	4.13	716.0	2185.0	50.0	10.93	1895.0
Խաղող	1892.5		13.5	1767.1	2500.0		14,7	1924,0	3000.0		23.9	3129.0
այդ թվում՝ բերքատու	1786.3	74.4	13.3	1740.6	1800.0	80.0	14.4	1885.0	2600.0	90.0	23.4	3063.0
Թուփ	906.0		5.3	420.6	906.0		4.5	357.0	906.0		5.4	428.5
այդ թվում՝ բերքատու	852.1	61.3	5.2	412.6	906.0	50.0	4.5	357.0	906.0	60.0	5.4	428.5
<b>Ընդամենը</b>	<b>68909.3</b>			<b>14719.4</b>	<b>80146.0</b>			<b>26085,0</b>	<b>87506.0</b>			<b>33713.0</b>



ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՆԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

ԱՂՅՈՒՍԱԿ 8

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Հ/Հ	Միջին ցուցանիշները	Չափի միավորը	2007 թ.		2010 թ.		2015 թ.	
			արտադրանք	համախառն արտադրանքն մլն.դր	արտադրանք	համախառն արտադրանքն մլն.դր	արտադրանք	համախառն արտադրանքն մլն.դր
1.	Կաթի արտադրությունը	հազ.տոննա	30.4	5169.7	50.0	8500.0	77.0	13090.0
2.	Իրացվող միս (կենդանի քաշով)	տոննա	4537.4	2872.5	5535	3503.6	7625	4826.6
	այդ թվում՝ տավարի	տոննա	2008	X	2555	X	3400	X
	ոչխարի և այծի	տոննա	432.2	X	580.0	X	800.0	X
	խոզի	տոննա	1209	X	1100	X	1800	X
	թռչնի	տոննա	888.2	x	1300	x	1625	x
3.	Չվի արտադրություն	հազ.հատ	13355	716.0	21500	1152.4	25000	1340.0
4.	Բրդի արտադրություն	տոննա	69.7	39.9	110.0	62.9	140.0	80.1
5.	Մեղր	տոննա	123.0	295.1	183.0	439.1	254.0	610.0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>x</b>	<b>9093.2</b>	<b>x</b>	<b>13658.0</b>	<b>x</b>	<b>19946.7</b>

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱԽԱՌՆ  
ԱՐՏԱԴՐԱՆՔԸ (ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐՈՎ, ՄԼՆ ԴՐԱՄ)

	2007թ.	Տեսակարար կշիռը (%)	2010թ.	Տեսակարար կշիռը (%)	2015թ.	Տեսակարար կշիռը (%)
Բուսաբուծություն	14719.4	61.8	26085.0	65.6	33713.0	62.8
Անասնաբուծություն	9093.2	38.2	13658.0	34.4	19946.7	37.2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>23812.6</b>	<b>100.0</b>	<b>39743.0</b>	<b>100.0</b>	<b>53659.7</b>	<b>100.0</b>

**Ց Ա Ն Կ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

	Միջոցառում	Նպատակ/Խնդիր	Արդյունք	Արդյունքի գնահատման ցուցանիշները	Իրականացնողներ	Ժամկետ
1.	Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալմանը փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցության ծրագրերի իրականացում	Գյուղական բնակավայրերի աշխատուժի, հումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բնակչության եկամուտների ավելացումը, աղքատության մակարդակի կրճատումը, հողի շուկայի կայացման համար պայմանների ստեղծումը	Գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավումը, համայնքների ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումը	Ծրագիրը ներառող համայնքներում աշխատունակ բնակչության զբաղվածության, տեղական հումքի, բնակչության 1 շնչին ընկնող եկամուտի մակարդակի փոփոխությունները	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)
2.	Համայնքներում կաթի հավաքման կետերի ստեղծման միջոցառումների ծրագրի կազմում և իրականացում	Կաթի վերամշակում, փոքր ձեռնարկությունների ստեղծում	Մթերվող կաթի քանակի ավելացում և որակով կաթնամթերքի արտադրություն	Կաթի արտադրություն և կաթնամթերքի ստացում	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2009-2010թթ

3.	Հանրապետությունում փոքրածավալ սպանդանոցների ստեղծման միջոցառումների ծրագրի կազմում և իրականացում	Գյուղատնտեսական կենդանիների սպանդի պայմանների բարելավում: Իրացվող մասնաբերքի որակի ապահովում և հիվանդությունների բացառում	Կխթանվի մսի ապրանքային շղթայի զարգացումը, կբարելավվի մորթից մինչև սպառողներին միսը իրացնելու ապրանքային շղթայի անվտանգության պայմանները: Աջակցություն կցուցաբերվի մսի վերամշակման փոքր ձեռնարկությունների ստեղծմանը	Սպանդանոցների միջոցով իրացվող մսի ծավալը: Իրացվող մսի որակը: Հիվանդությունների առկայությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2010-2012թթ
4.	«Գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի մշակում	Գյուղատնտեսությունում տնտեսվարող սուբյեկտների դասակարգման չափորոշիչների սահմանում, կոոպերատիվների ձևավորման համար իրավական հիմքերի ստեղծում	Իրավական հստակեցում կստանան գյուղատնտեսական կազմակերպությունները և գյուղատնտեսական կոոպերատիվները	Գրանցված գյուղատնտեսական կազմակերպությունների և գյուղատնտեսական կոոպերատիվների թիվը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2009-2010թթ
5.	Ազրոպարենային ոլորտում կոոպերացիայի ձևավորման քաղաքականության ծրագրի մշակում և իրականացում	Գյուղատնտեսական կոոպերատիվների իրավական հստակեցումը, կոոպերատիվների առանձին տեսակների գործունեության կարգավորումը, հարկային օրենսդրության հստա-	Կհստակեցվեն պետության ու գյուղատնտեսական կոոպերատիվների փոխհարաբերությունները: Կոոպերացիայի զարգացումը կնպաստի գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծմանը,	Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալներ, բերքատվության ծավալներ, բերքատվության և մթերատվության ցուցանիշներ,	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն,	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)

		կեցումը				
		Գյուղատնտեսական մթերքների իրացման, մատակարարումների, ապասարկումների արդյունավետ իրականացումը: Արտադրության մասնագիտացումը, աշխատանքային և այլ ռեսուրսների օգտագործման մակարդակի բարձրացումը	մասնավորապես՝ գյուղատնտեսական մթերքների իրացման, մատակարարումների և սպասարկումների, մասնագիտացման, աշխատանքային ռեսուրսների օգտագործման և այլ հարցեր	մթերքների արտադրության վրա կատարված ծախսերի մակարդակ, գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	
6.	«Սերմերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող իրավական փաստաթղթերի մշակում	«Սերմերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկման ապահովում	Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, փոխադրումների, պահպանության, իրացման և օգտագործման հարաբերությունների կարգավորում	Օգտագործվող սերմերի մեջ հավաստագրված սերմերի տեսակարար կշիռը: Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2009-2015թթ

7.	Սերմնաբուծության զարգացման ծրագրի իրականացում:	Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, անհայտ ծագման սերմերի օգտագործման բացառումը, երաշտի և ցրտահարությունների նկատմամբ կայունության ապահովումը, բուսաբուծական ճյուղի ինտենսիվացումը և ռիսկերի նվազեցումը	Պայմաններ կստեղծվի բուսաբուծության ճյուղի ինտենսիվացման համար, կբացառվի անհայտ ծագման սերմերի օգտագործումը, կբարձրանա մշակաբույսերի բերքատվությունը, կավելանա բուսաբուծական մթերքների արտադրությունը: Բերքատվության բարձրացման շնորհիվ բուսաբուծության ճյուղի արդյունավետ բարձրացումը, սերմնանյութի և բուսաբուծական մթերքների որակի բարելավումը	Գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվությունը, մշակաբույսերի կայունությունը բնական աղետների նկատմամբ, սելեկցիոն հատկանիշների պահպանումը, նոր բարձր հատկանիշներ ունեցող սորտերի փորձարկումը, բարձր սերմնանյութի օգտագործման տեսակարար կշռի ավելացումը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2008-2015թթ
8.	«Տոհմային անասնաբուծության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող իրավական փաստաթղթերի մշակում:	«Տոհմային անասնաբուծության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկման ապահովում	Անասնաբուծության ինտենսիվացման, տոհմանյութի ձեռքբերման, գյուղատնտեսական կենդանիների հատկանիշների բարելավման, վերարտադրության, ցեղերի պահպանման հարաբերությունների կարգավորում	Գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում, նոր մթերատու ցեղերի բուծում:	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր:	2009-2015թթ
9.	Տոհմաբուծության զարգացման ծրագրի իրականացում:	Գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում, նոր բարձր մթերատու ցեղերի բուծում	Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում, անասնապահությամբ զբաղվող	Գյուղատնտեսական կենդանիների մթերատվություն, մթերքների որակի բարելավում: Գյուղատնտեսական	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային	2008-2015թթ

			գյուղացիական տնտեսությունների աջակցության ընդլայնում, ճյուղի արդյունավետության և ինտենսիվացման մակարդակի բարձրացում	կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում և նոր մթերատու ցեղերի բուծում ու ներդրում	Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	
10.	Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում	Կովերի արհեստական սերմնավորման համար սերմնահեղուկի ծեռքբերում և պահպանում	Սերմնավորման համար կենսաբանական ու գենետիկական կայուն հատկանիշներ ունեցող սերմնահեղուկի ապահովում	Սերմնատվության մակարդակը: Գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2008թ. և հետագա տարիներ (2015թ.)
11.	«Գյուղատնտեսության համատարած հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի մշակում	Համատարած հաշվառման անցկացում	Կստեղծվի հաշվառման համակարգ և տվյալների բանկ	Ծրագրային աշխատանքների համար հավաստի տվյալների առկայություն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային վիճակագր-րական ծառայություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2009-2010թթ

12.	Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման միջոցառումների ծրագրի իրականացում	Հանրապետությունում տոհմային գործի բարելավում, անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասունների գրավադրման համար նախապայմանների ստեղծում	Կստեղծվի հաշվառման համակարգ և տվյալների բանկ, առավել արդյունավետ կկազմակերպվեն տոհմային և անասնաբուժական միջոցառումները	Տավարի գլխաքանակի վերաբերյալ հավաստի տվյալների առկայություն: Ծրագրային աշխատանքների համար հավաստի տվյալների առկայություն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)
13.	Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործման կանխում: Կոնդիցիոն սերմերի վերարտադրության ապահովում	Կավելանան կոնդիցիոն սերմերի վերարտադրության ծավալները: Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության մակարդակը: Օգտագործվող սերմերի մեջ կոնդիցիոն սերմերի տեսակարար կշիռը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2008թ. և հետագա տարիներ (2015թ.)
14.	Տնկարանային տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Բարձր որակի բարձրարժեք սորտերի խաղողի և պտղատու տնկիների արտադրություն: Նոր հիմնվող այգիները մաքրասորտ, լիարժեք, բարձր բերքատու դարձնելը	Պտղի և խաղողի արտադրության ծավալների ավելացում	Պտղի և խաղողի բերքատու կայուն սորտերի ներդրում	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2008-2010թթ
15.	Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսական հողերի գիտականորեն հիմնավորված պարարտացման համակարգերի մշակում և ներդրում	Հողերի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության մակարդակը, հողերի բերրիության մակարդակը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2009թ. և հետագա տարիներ (2015թ.)



16.	Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատում	Գյուղատնտեսական հողատեսքերի որակական փոփոխությունների բացահայտում, հարկման նպատակով դրանց կադաստրային արժեքի որոշում	Գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման խմբերի և կադաստրային արժեքի որոշում	Կադաստրային արժեքների ճշգրտում	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2009-2010թթ և հետագա տարիներ (2015թ.)
17.	Բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակման խրախուսման միջոցառումների ծրագրի իրականացում	Տեխնիկական մշակաբույսերի ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում: Անասնակերերով ապահովվածության մակարդակի բարձրացում	Տեխնիկական մշակաբույսերը կներառվեն ցանքաշրջանառության մեջ: Կապահովվի տեղական արտադրության անասնակերի սպիտակուցային հավելումները, որը կբերի կաթի և մսի արտադրության աճի: Գյուղացիական տնտեսությունները հավելյալ դրամական եկամուտներ կստանան անասնակերի որակի բարձրացման հաշվին: Կբարելավվի նաև կենդանիների առողջությունը	Տեխնիկական մշակաբույսերի բերքատվության և արտադրության շահութաբերության մակարդակը, ցանքատարածությունների աճի դինամիկան: Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության մակարդակը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	
18.	Ղեղաբույսերի պլանտացիոն աճեցման, հատապտուղների արտադրության և վերամշակման խթանման ծրագրի իրականացում	Հանրապետության բնատնտեսական ներուժի ռացիոնալ օգտագործում, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում	Բուսաբուծության համախառն արտադրանքի ավելացում, արտահանման հնարավորությունների ընդլայնում	Ղեղաբույսերի և հատապտուղների արտադրության (օգտագործման) ծավալները: Արտադրության արդյունավետությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր:	2010-2012թթ և հետագա տարիներ (2015թ.)
19.	Գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական	Գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական	Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի	Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը,	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության	2010թ. և հետագա տարիներ

	մոնիթորինգի միջոցով ծրագրի իրականացում	վիճակի մոնիթորինգի, բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների մշակում, բույսերի պաշտպանության միջոցառումների փորձարարական անցկացում	արդյունավետ ձևերի և մեթոդների կիրառում	բուսասանիտարական կայուն վիճակի ապահովումը	գյուղատնտեսության նախարարություն	(2015թ.)
20.	Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում	Առավել տարածված և վտանգավոր օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացումը	Կլանխվի վնասատու օրգանիզմների գործունեությունը, նվազագույնի կհասցվի դրանց տարածման արեալը: Կապահովվի որակյալ և բարձր բերք	Բույսերի պաշտպանության միջոցառումներում ընդգրկված տարածքները և վնասատուները: Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2008-2010թթ և հետագա տարիներ (2015թ.)
21.	Համաճարակային միջոցառումների գնահատման (սերոմոնիթորինգի) ծրագրի իրականացում	Կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելում, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծում, հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների արդյունքների մոնիթորինգ և համապատասխան	Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետ մեթոդների և միջոցառումների ընտրություն	Հակահամաճարակային միջոցառումների իրականացումից հետո հիվանդությունների առկայություն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2009թ. և հետագա տարիներ (2015թ.)

		առաջարկությունների մշակում				
22.	Պատվաստումների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծրագրի իրականացում	Պատվաստումների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների առկայության ապահովում	Կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր 13 հիվանդությունների դեմ պատվաստումների և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութերի ապահովում	Պատվաստումներից և հակահամաճարակային միջոցառումներից հետո հիվանդությունների առկայությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2008թ. և հետագա տարիներ (2015թ.)
23.	Հանրապետությունում մեղվաբուծության աջակցության ծրագրի իրականացում	Մեղվաբուծության զարգացման համար հանրապետության հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործում	Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, արտահանման ծավալների ավելացում	Մեղվաբուծական արտադրանքի ծավալների ավելացում, արտադրության արդյունավետության բարձրացում, արտահանման ծավալների աճ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2009-2010թթ
24.	Ձկնաբուծության զարգացման ծրագրի մշակում և իրականացում	Ձկնաբուծության զարգացման համար հանրապետության հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործում	Պարենային ապահովության մակարդակի բարձրացում	Ձկնաբուծության արդյունքի ծավալների ավելացում	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)
25.	«Անասնակերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և դրա կիրարկումն	Անասնակերի հետ շփվող նյութերի և կերային հավելումների ներմուծման և արտահանման,	Կերի անվտանգության միջազգային չափանիշների ու պահանջների ներդրում	Կերի անվտանգության ապահովումը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)

	ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում	արտադրության, պահման, պահեստավորման, փոխադրման, օգտագործման, իրացման, մակնշման, փաթեթավորման հետ կապված հարաբերությունների կարգավորում				
26.	Բնական կերահանդակների (արոտների) մոնիթորինգի բարելավման միջոցառումների ծրագրի իրականացում	Բնական կերահանդակների օգտագործման արդյունավետությունը	Տավարի, ոչխարի մսի և կաթի, մասամբ խոզի մսի արտադրության վրա կատարվող ծախսերի կրճատում	Արոտներից ստացվող կերերի ելքը, անասնապահական մթերքների արտադրության վրա կատարված ծախսումների մակարդակը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)
27.	Գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական թափոններից (անասնապահական) կենսազազի օգտահանման և օրգանական պարարտանյութերի արտադրման կազմակերպում	Գյուղատնտեսությունում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործում և անհրաժեշտ ռեսուրսների ապահովվածության մակարդակի բարձրացումը	Թափոնների խնայողական օգտագործում, պարարտանյութերի ապահովվածության մակարդակի բարձրացում	Կենսազազ օգտագործող տնտեսությունների թիվը, տվյալ տեխնոլոգիայի արդյունքում արտադրված օրգանական պարարտանյութի ծավալը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2011թ. և հետագա տարիներ (2015թ.)
28.	Կլիմայի փոփոխության հետևանքով գյուղատնտեսության խոցելիության նվազեցման	Կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսության ճյուղի կայունության մեծացում	Գյուղատնտեսության կայունության և տնտեսական աճի ապահովում	Գյուղատնտեսության հիմնական արտադրատնտեսական ցուցանիշները	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա	2010-2015թթ

	միջոցառումների իրականացում				միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	
29.	Գյուղատնտեսական հողերի և հատկապես, արոտավայրերի դեգրադացիայի (վատթարացման) և անապատացման դեմ պայքարի միջոցառումների իրականացում	Գյուղատնտեսական հողերի վիճակի վատթարացման կանխում և բարելավում	Գյուղատնտեսական հողատեսքերի վիճակի բարելավում	Ղեգրադացիայի ենթարկված գյուղատնտեսական հողատեսքերի և ընդհանուր հողատեսքերի հարաբերությունը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	2010-2015թթ
30.	Ջրախնայողական նորարարական տեխնոլոգիաների ներմուծման և զարգացման ծրագրերի իրականացում	Ոռոգման ջրի խնայողական օգտագործումը	Ջրապահովվածության մակարդակի բարձրացումը և սնուցման ռեժիմի բարելավումը	Ոռոգելի մշակաբույսերի բերքատվության աճի ցուցանիշները	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրա-	2010-2015թթ

					պետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության վարչություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	
31.	Հանքային պարարտանյութերի ներկրման և իրացման միջոցառումների իրականացում	Գյուղացիական տնտեսություններին պարարտանյութերի մատակարարում	Ագրոտեխնիկայի պահանջների կատարման բարձրացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվություն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2008-2015թթ
32.	Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի աստիճանաբար նորացման միջոցառումների իրականացում	Տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում	Մեքենայացման մակարդակի բարձրացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերի կրճատում	Գյուղատնտեսական արտադրական գործընթացների մեքենայացման աստիճանը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2008-2015թթ
33.	Հակակարկտային ծառայության նոր տեխնոլոգիաների ներդրում	Բնական աղետների հետևանքների մեղմացում	Բերքի կորուստի նվազում, բնակչության եկամուտների ավելացում	Գյուղատնտեսական ռիսկերի նվազեցում	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2010-2015թթ
34.	Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ	Աջակցել փոքր ու միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը`	Որոշակիորեն կբավարարվի գյուղատնտեսությամբ զբաղվող	Վարկավորման նկատմամբ գյուղացիական տնտեսությունների	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության	2010թ. և հետագա տարիներ

	առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր	Ֆերմերների ու գյուղական ձեռնարկությունների համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում շուկայամետ մասնավոր և պետական ներդրումների խթանման միջոցով	տնտես-վարող սուբյեկտների պահանջը վարկային ռեսուրսների նկատմամբ: Կզարգանա տեղեկատվական, խորհրդատվական, մարքեթինգային համակարգը: Արդյունքում կբարձրանա գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղացիական տնտեսությունների եկամուտները, կկրճատ-վի աղքատության մակարդակը	ապահովվածության մակարդակը: Խորհրդատվական, տեղակատվական, կառույցների գործունեության մեխանիզմների կատարելության աստիճանը, գյուղացիական տնտեսությունների կողմից վերջիններիս գործունեության գնահատականը	գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	(2015թ.)
35.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր	Գյուղատնտեսության ոլորտի վարկավորում, ներտնտեսային ոռոգման ցանցի գործունեության, գյուղատնտեսության և համայնքների զարգացման ապահովում, գյուղական բնակչության եկամուտների կայուն աճ	Բարձր Լեռնային, հեռավոր և առավել աղքատ գյուղերի տնտեսական վիճակի կայունացում, այդպիսի բնակավայրերի պահպանում և միգրացիոն գործընթացի նվազեցում, գյուղական փոքր կազմակերպությունների աջակցություն, տնտեսական կառույցների ձևավորման աջակցություն հետևյալ բաղադրիչների իրականացման միջոցով. - գյուղական ձեռնարկությունների ֆինանսավորում, - տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքներ, - գյուղական միջնորդային բիզնես ծառայություններ	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ: Գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետության ցուցանիշներ: Գյուղական բնակավայրերում բնակչության զբաղվածության մակարդակ: Գյուղական համայնքների զարգացման ընդհանուր իրավիճակ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2009-2010թթ և հետագա տարիներ (2015թ.)

36.	Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հստակեցում	Գյուղատնտեսությունում տնտեսվարող սուբյեկտների համար բարենպաստ պայմանների ձևավորման նախադրյալների ստեղծում	Հանրապետության գյուղատնտեսության տարածաշրջանային զարգացման համար նախադրյալների ստեղծում	Գյուղատնտեսության սուբսիդավորման հիմնավորված մեխանիզմների առկայություն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	2008-2010թթ և հետագա տարիներ (2015թ.)
37.	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսությունում գործող տնտեսվարողների գործունեության կայունության ապահովում և վերարտադրության համար հնարավորությունների պահովում	Ճյուղի արդյունավետության բարձրացումը: Գյուղական մթերքների արտադրության ծավալների ավելացումը	Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների աճը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը՝ պետության աջակցությամբ	2010թ. և հետագա տարիներ (2015թ.)
38.	Գյուղատնտեսական մեծածախ շուկաների ձևավորման ծրագրերին աջակցություն	Գյուղատնտեսական մթերքների արտադրող-սպառող շղթայում արտադրանքի ազատ շարժին նպաստող պայմանների ապահովում	Կներդրվեն գյուղատնտեսական մթերքների իրացման արդյունավետ մեխանիզմներ: Կբարձրանան գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը և գյուղացիական տնտեսությունների	Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության աստիճանը: Գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը: Գյուղատնտեսական մթերքների ներմուծման-արտահանման հաշվեկշիռը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմեր	2011-2013թթ և հետագա տարիներ (2015թ.)



			Եկամուտները: Կբարձր անա սպառողին հասցվող գյուղատնտեսական մթերքների որակը: Կավելանա գյուղատնտեսության համախառն արտադրանքը կբարձրանա ճյուղի արդյունավետությունը, կլուծվեն պարենային անվտանգության հարցերը			
39.	Սննդի անվտանգության օրենսդրության և կանոնակարգումների միասնականացման զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագրի իրականացում, «Սննդամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում	Սննդի հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը	Բոլոր մակարդակներում (համայնքային և ազգային) սննդի վերաբերյալ օրենսդրության և կանոնակարգումները համապատասխանեցվեն միջազգային չափանիշներին, ուղեցույցներին և առաջարկություններին, կապահովվեն բավարար իրավասություններ և հզորություններ սպառողների առողջության պաշտպանության և առևտրի ոլորտի բարելավման ուղղությամբ	Սննդի հետ կապված հարաբերությունների կարգավորման իրավասությունները դաշտի միջազգային համապատասխանեցման աստիճանը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն	2009-2010թթ
40.	«Խաղողի հումքով ոգելից խմիչքների	Պինեգործության նպատակով խաղողի	Խաղողի հումքով ոգելից խմիչքների	Միջազգային չափանիշներին	Լեռնային Ղարաբաղի	2010թ. և հետագա

	մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում	մշակության, իրացման և խաղողի հումքով ոգելից խմիչքների արտադրության, վերամշակման, մակնշման և շուկայահանման ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորում	արտադրության համար թույլատրելի մեթոդների, մշակումների, ներկայացվող տեխնիկական պահանջների սահմանում	համապատասխան արտադրանքի արտադրությունը	Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	տարիներ (2015թ.)
41.	Սննդի վերահսկման լաբորատորիաների համակարգի ստեղծմանն ուղղված միջոցառումների ծրագրի իրականացում	Սննդի վերահսկման լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության ապահովումը	Կզարգանա սննդի վերահսկողության ոլորտը, որը կապահովի սպառողների բավարար պաշտպանվածությունը և միջազգայնորեն ընդունված չափանիշների ու ընթացակարգերի կիրառման միջոցով կօժանդակվի գյուղատնտեսական արտադրանքների արտահանումը: Պահանջվող սարքավորումների, նյութերի և անհրաժեշտ ուսուցման, ինչպես նաև կիրառվող մեթոդների բարելավումը	Սննդի վերահսկման լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության և սպառողների շահերի պաշտպանության մակարդակները	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարություն	2010-2012թթ
42.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականության միջոցառումների իրականացում	Մակրոտնտեսական իրավիճակի կայունացում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, բնակչության	Մակրոտնտեսական իրավիճակի կայունացում: Ագրարային հատվածի արդյունավետության բարձրացում: Ներքին և արտաքին ներդրումների ծավալ-	Բնակչության աղքատության մակարդակը: Պարենամթերքներով ապահովվածության փաստացի մակարդակը: Սեփական արտադրության	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտես-	2009-2015թթ

		աղքատության մակարդակի նվազեցում	ների մեծացում: Պարենամթերքների ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավում, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում	տեսակարար կշիռը սպառման կառուցվածքում: Սննդամթերքի ներմուծման-արտահանման հաշվեկշիռը: Բնակչության եկամուտների մակարդակը: Գործազրկության մակարդակը	սական զարգացման նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն և այլ շահագրգիռ մարմիններ	
--	--	---------------------------------	---	--	---	--

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ